



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Ց

(ՆԻԶԱՄՆԱՄԷԻ ՄԻԼԼԷՅԻ ԷՐՄԷՆԵԱՆ)



342  
2-23

Հրատարակութիւն  
ԱՐԾԻԻ ԺՈՂՈՎՐԿԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌՈՒՄՆՈՑԻ

Կ. ԳՈՒԼՍ  
1914

14449

342 Ազգային  
Ա-23 աստիճանային  
Հայոց

1814

310 05	1	մայիս 29
10	310 86	18
4	15952	31/5/96
9	2223	23.07.10
9	3152	27/7/15
9	22336	23/9/19
ար	17299	20/11/19

340

1739-ԱԶ

342  
2-23  
ԱԶ

EPDS 10 16  
01 MAR 2007  
05 FEB 2007

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Ց

(ՆԻԶԱՄՆԱՍԷԻ ՄԻԼԼԷՔԻ ԷՐՄԷՆԵԱՆ)



Հրատարակություն  
ԱՐՄԻԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՎԱՅՈՒՍՆՈՑԻ

Կ. ՊՈՒԽ  
1914

31.01.2013

34.460

0 2 FEB 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿ

ԱՐԽԱՆԱԿԻ ԱՐԽԱՆԱԿ

**Տպագր. Տ. ՏՕԳՐԱՄԱՆՆԱՆ**

Կ. Պոլիս, Պապր-Ալի ճառտեսի, Թխ. 49



# Պ Ա Տ Ճ Է Ն

## Ազգային Սահմանադրութեան

(ՆԻՋԱՄՆԱՍԷԻ ՄԻԼԼԷՔԻ ԷՐՄԷՆԵԱՆ)

**ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԳՈՒՌ**  
ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԱՐՏԱԳԻՆ ԳՈՐԾՈՑ

Քուստանար 191

### Առ հոռեւնագարդ Տեղապահ Պատրիարքի

Խոհեմագարդ եւ սիրելի Էփէնաի,

Քարեկարգութեանց վերաբերեալ Կայսերական հրովարտակը կը պահանջէ, որ ամէն Հասարակութիւն իր վայելած առանձնաշնորհութիւններն ու արտօնութիւնները որոշեալ պայմանաժամի մէջ ի ընդհանրով ժամանակին բերմանցը եւ քաղաքակրթութեան արդեանցն ու գիտութեանց պահանջած բարեկարգութիւնները խորհրդածութեանը որոշէ, ու Քարծրագոյն Գրան ներկայացնէ. եւ Հոգեւորական գլխոյ շնորհաւոր իշխանութիւնն ու ձեռնհասութիւնը՝ իւրաքանչիւր Հասարակութեան ապահովուած վիճակին ու նոր դիրքին հետ համաձայնութեան մէջ դրուի: Ուստի Հայոց Ազգին համար պատուաւոր անձերէ բաղկացեալ Յանձնաժողովի մը ձեռօք Սահմանադրութեան ուրուագիծ մը պատրաստուեցաւ: Բայց միանգամայն պատշաճ համարուեցաւ որ Սարգիս Պատրիարքի օրով կազմուած Ընդհանուր ժողովոյ Եկեղեցական անդամներն ու Թաղական երեսփոխանները՝ քուէից առաւելութեամբ եօթն հոգիէ բաղկացեալ Յանձնաժողով մը ընտրեն, եւ վերոյիշեալ ուրուագիծը անգամ մըն ալ անոր զոյց տրուի: Վասնորոյ կը խնդրեմք որ պէտք եղած հրաւերի նամակները երկու երեք օրուան մէջ զրկելով, յիշեալ Յանձնաժողովին ընտրութիւնը ընել ապա եւ անոր՝ Քարծրագոյն Գուռը միւս Յանձնաժողովին ու այս գործիս համար յատկապէս որոշուած Պաշտօնակալին հետ մէկտեղելովը՝ հարկ եղած անօրէնութեան կատարուելուն շնորհք ընէք: Կը խնդրեմք նաեւ որ վերոյիշեալ կերպով ընտրուած եօթն անձանց անունները յառաջագոյն մեզ ուղարկէք:

(Ստորագրեալ)  
**Ա.Լ.Ի**

Բարձրագոյն Դրան եւ Ազգային Յանձնաժողովներուն  
առ Կայսերական Կառավարութիւն մատուցած  
Յայտագրին օրինակը:

Կայսերական Տէրութիւնը; ի վաղուց անտի իր արդար  
քասէր հովանաւորութեան ներքեւ գտնուող զանազան  
Ազգաց՝ **Կրօնից ազատութեան** եւ առտնին գործոց **մասնաւո-  
վարչութեան** համար առանձնաշնորհութիւններ ու արտօ-  
նութիւններ շնորհած է:

Այս արտօնութիւնները թէպէտ եւ ըստ սկզբանց ամէն  
ազգաց համար միօրինակ, բայց միանգամայն ամէն մէկուն  
կրօնական սեպիական կանոնաց եւ սովորութեանց համե-  
մատ տնօրինուած ըլլալով, իւրաքանչիւր Ազգ զանոնք իր  
բնիկ սովորութեանց եւ ընթացից համեմատ ի գործ դնե-  
լով վայելած է:

Հայոց ազգը միւս ազգաց պէս մինչեւ ցայսօր Պատ-  
րիարք մը ունեցած է, որ Տէրութեան կողմէն իբր նախա-  
գահ Պատրիարքական Վարչութեան Յանչցուած է, եւ ներ-  
կայացուցիչ Ազգին ու միջնորդ գործադրութեան Կայսե-  
րական հրամանաց. եւ որ ի վաղուց անտի հասա-  
րակօրէն եկեղեցական դասէն ընտրուած է, Ազգին գա-  
նական կարգի անհատներէն բաղկացեալ Ընդհանուր Ժո-  
ղովի մը ձեռօք:

Պատրիարքը իր պաշտօնին մէջ՝ որ է Ազգին նախա-  
գահել եւ անոր օգտիցը հսկել, Ազգին՝ Ընդհանուր Ժողո-  
վոյ միջնորդութեամբ ունեցած ազդեցութենէն ու վերա-  
տեսչութենէն բնաւ մէկ ժամանակ ազատ եղած չէ. ա-  
սօր ապացոյցն է, Պատրիարքին ամէն ժամանակ Ընդհա-  
նուր Ժողով հրաւիրելն ու գումարելը, եւ կամ ըստ պա-  
հանջման գործոց կամ Բարձրագոյն Դրան բացորոշ մէկ  
հրամանին վրայ կարեւոր խնդրոյ մը ծագած ատենը՝ Ընդ-  
հանուր Ժողովոյ դիմելն ու անոր որոշումը խնդրելը:

Հայոց Ազգը՝ ասկէ քսան տարւոյ չափ առաջ՝ կայսե-  
րական Տէրութենէն խնդրեց որ Պատրիարքարանի մէջ  
Պատրիարքին նախագահութեամբ երկու ժողով հաստատ-  
ուին. մէկը Կրօնական, միւսը՝ Քաղաքական գործոց հա-  
մար, որպէս զի Պատրիարքին պաշտօնատարութեանը գոր-

ծակից եւ օգնական ըլլան, եւ Ազգին թէ՛ ըստ Քաղաքա-  
կանի եւ թէ՛ ըստ Կրօնականի՝ վաղեմի կանոններէն եւ  
սովորութիւններէն ո՛ր եւ է խոտորմանց առաջքը առնուի:  
Երբ այս ժողովները հաստատուեցան, ազգային ման-  
րամասն տնտեսութեան համար ալ՝ քանի մը Խորհուրդներ  
հաստատել հարկ եղաւ:

Բայց որովհետեւ Ազգային պաշտօնատեարց ամէն մէ-  
կուն իշխանութիւնը եւ պարտաւորութիւնները որոշա-  
բար սահմանուած չէին, յայտնի էր որ Ազգին վիճակը բա-  
րեկարգելու մասին եղած այս ջանքերը, Ազգային Վարչու-  
թեան զանազան մասանց մէջ, նաեւ յիշեալ Վարչութեան  
եւ Ազգին մէջ՝ անպակաս պառակտումներ ծագելուն ա-  
ռիթ պիտի տային. եւ աս ալ ամէն կողման վերաբերեալ  
իրաւանց գործադրութեան մասին շատ մը անկարգու-  
թիւններ, եւ Ազգային վարչութեան մէջ ալ շփոթութիւն  
եւ խռովութիւն պիտի պատճառէր:

Սիսա՝ այս շփոթութեանց եւ երկպառակութեանց պատ-  
ճառները վերցնելու եւ ամէն կողման պահանջմանց վնա-  
սակարութիւնը բառնալու նպատակաւ, Կայսերական Տէ-  
րութիւնը իր բոլոր հպատակաց վրայ ունեցած հայրական  
խնամօքը՝ Ազգիս մէջէն խառն Յանձնաժողով մը կազմել  
հարկաւոր դատեց, որպէս զի Հայոց Ազգին Կրօնական եւ  
Քաղաքական բնիկ սովորութեանց, նաեւ ի վաղուց անտի  
ընդունուած ընթացքին համաձայն Սահմանադրութիւն մը  
պատրաստուի:

Արդ՝ խառն Յանձնաժողովը պատշաճ կը դատէ որ վա-  
ւերացման համար Բարձրագոյն դրան մատուցուած Սահ-  
մանադրութեան ուրուագծին համեմատ՝

Ա. Պատրիարքին ի մէջ Տէրութեան եւ Ազգին միջնորդ  
Ըլլալու պաշտօնը ըստ առաջին դրութեան մնայ:

Բ. Ընդհանուր Ժողովոյ կազմութիւնը առաջինէն ա-  
ւելի կանոնաւոր կերպիւ նորոգուի: Եւ Ազգային երես-  
փոխանները **Էսնաճներէն** ընտրուելու տեղ (ըստ որում  
**Էսնաճներու** վիճակը նոյնը չէ՝ ինչ որ առաջ էր,) Յունաց  
Ազգին մէջ գործադրուած եղանակէն գուցէ աւելի կա-  
նոնաւոր եւ օրինաւոր կերպով՝ Եկեղեցեաց ժողովուրդնե-  
րէն (այսինքն Թաղերէն) ընտրուին:

Եւ որովհետեւ դուրսերը ընակող հայ ժողովուրդները իրաւամբ կը գանգատին թէ Պատրիարքարանի որոշումներուն խորհրդակցութենէն եւ մասնակցութենէն բոլորովին զուրկ են, երեսփոխաններուն մէկ մասը գաւառներուն կողմէն ընտրուին. եւ Կոստանդնուպոլսոյ Թաղերուն երեսփոխանաց վրայ աւելցուին: Եւ ժողովոյն Կրօնական մասը, այսինքն անդամոց քսանը՝ Կոստանդնուպոլսոյ գրտնուող եկեղեցականներուն կողմէն ընտրուին. որով Ընդհանուր ժողովոյ անդամոց թիւը ընդամէնը հարիւր քառասունի կ'ամփոփուի:

Ասոնց պաշտօնը տասն տարի տեւէ. եւ ամէն տարի տասներորդ մասը փոխուելով նորէն ընտրութիւն ըլլայ:

Ընդհանուր ժողովը անուանէ թէ՛ Պատրիարք եւ թէ՛ անոր նախագահութեամբը գործող Ազգային երկուց ժողովոց անդամները. եւ անոնց գործողութեանց վերատեսչութիւն ընէ:

Գ. Կրօնական գործոց տեսչութիւնը՝ Կրօնական ժողովոյն, քաղաքական գործոց տեսչութիւնը՝ Քաղաքական ժողովոյն, եւ խառն գործոց տեսչութիւնն՝ ալ՝ յիշեալ երկու ժողովներուն մէկտեղ գալովը կազմուած Խառն ժողովոյն վերաբերեալ ըլլայ:

Դ. Կրօնական եւ Քաղաքական ժողովները իրենց ձեռնհասութեան շրջանակին մէջ գտնուած թէ՛ եկեղեցեաց ժողովուրդներուն (Թաղականներուն) եւ թէ՛ եկեղեցեաց, դպրատանց, հիւանդանոցաց, վանօրէից եւ ասոնց նման ուրիշ տեղեաց ազգային գործերուն ամէնն ալ տեսուչ եւ Թաղական Խորհուրդներու միջնորդութեամբ տնօրինեն:

Ե. Վարչութեան կեդրոնը Ազգային Պատրիարքարանն ըլլայ:

Պատրիարքը՝ իբրեւ պաշտօնական Գլուխ Պատրիարքարանի, թէ՛ Ընդհանուր ժողովոյն եւ թէ՛ Ազգային կրկին ժողովներուն նախագահութիւն ընէ. եւ Ազգին ուղղակի կամ անուղղակի վերաբերեալ ամէն գործերը տնօրինէ ընդ վերատեսչութեամբ Ընդհանուր ժողովոյ:

Ձ. Գաւառական ժողովրդոց Վարչութիւնը Կեդրոնական Վարչութեան հետ կապուած ըլլայ: Եւ գաւառներուն մէջ Առաջնորդները նախագահութիւնն ընեն տեղական

ժողովներուն, որոնք պիտի կարգադրուին ըստ տրամադրութեանց Կոստանդնուպոլսոյ ժողովոց, եւ նոյն (տեղական) ժողովոց գործերն ալ տնօրինեն:

Է. Գաւառական ժողովները՝ Կեդրոնական Վարչութեան, եւ սոյն Վարչութեան Խորհուրդներուն ամէն մէկը ո՛ր ժողովոյ վերաբերի՝ նոյն ժողովոյն, եւ Ազգային ժողովները՝ Ընդհանուր ժողովոյն. եւ Պատրիարքը մէկ կողմէն Կայսերական Տէրութեան, եւ միւս կողմէն (Ընդհանուր ժողովոյ միջնորդութեամբ) Ազգին պատասխանատու ըլլան:

Ը. Եւ որովհետեւ Կայս. Տէրութիւնը Հայոց Ազգին համար տալու հրամաններուն գործադրութեան ընական միջնորդ եւ Ազգային Վարչութեան գլուխ Պատրիարքը կը ճանչնայ եւ անոր կ'ուղղէ իր հարցումները. եւ թէ՛ Տէրութիւնը Պատրիարքին հրամայէ որ հարցուցած խնդրոյն վրայ իր (այսինքն Պատրիարքին) կարծիքը յայտնէ, Պատրիարքը իր նախագահութեամբը գործող ժողովներուն որոշման համեմատ շարժի: Իսկ եթէ Ազգին կարծիքն առնելով Տէրութեան հաղորդել հրամայէ, այն ժամանակ Պատրիարքը Ընդհանուր ժողով հրաւիրէ. եւ այն ժողովոյն վերջնական որոշմունքը յայտնէ Տէրութեան:

Թ. Ազգային Վարչութիւնը երեք տեսակ պարտաւորութիւն ունի, որոնց առաջինն է առ Կայս. Տէրութիւն. այս է՝ Ազգը կատարելապէս հաւատարիմ հպատակութեան մէջ պահել, եւ Ազգին թէ՛ ընդհանրապէս եւ թէ՛ ի մասնաւորի ամէն մէկ անհատներուն իրաւանց եւ արտօնութեանց՝ Տէրութեան կողմէն պահպանութիւնը ապահովել: Երկրորդն է առ ազգն, որ է ճշմարտապէս գթութեամբ եւ հայրաբար վարուիլ: Եւ երրորդն է առ Աթուռ էջմիածնի. այն է Հայաստանեայց եկեղեցւոյ Կրօնական կանոնաց եւ օրինաց համեմատ վարուիլ:

Ահա՛ ասոնք են Սահմանադրութեան այն կէտերը զոր Խառն Յանձնաժողովը պատշաճ կը դատէ, եւ զոր կը հաստատէ միւս յանձնաժողովը, որ Ձեր Վսեմութեան հրամանին համեմատ ի դիմաց Ազգին՝ Սահմանադրութեան վրայ

իր դիտողութիւնները Բարձրագոյն դրան ներկայացնելու համար կազմուեցաւ:

Ի Կ. Պոլիս, 16 Փետ. 1862

**ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ**

Անդամք Բարձրագոյն Դրան Յանձնաժողովոյ

ՍՏԵՓՈՆԵՆՈՍ ԵՊԻՍԿՈՍՈՍ ՆԻԿՈՄԻԴԻՈՅ, Տեղապահ  
Պատրիարքական Աթոռոյ Կոստանդնուպոլսոյ

ՅՕՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՂՈՒՏԻԿԵԱՆ

ՅՕՀԱՆՆԷՍ ԲԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆ, Սիլւատր Ս. Խաչ Եկեղեցւոյ

ՅՕՀԱՆՆԷՍ ԲԱՀԱՆԱՅ ՀԻՆԻՔԵԱՐՊԷՅԷՆՏԵԱՆ, Ս. Հրեատկապետ  
Եկեղեցւոյ Ի Պալատ

ԳԷՈՐԳ ԵՐԱՄԵԱՆ, ՅՕՀԱՆՆԷՍ ՏԱՏԵԱՆ, ՄԵՐՈՎԲԷ ՎԻՉԷՆՏԵԱՆ,  
ԳՐԻԳՈՐ ԱՂԱԹՕՆ, ՅԱԿՈՔ ՄՈՒՊԱՀԵԱՃԵԱՆ, ՅԱԿՈՔԻԿ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ,  
ՅՕՀԱՆՆԷՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ, ԳԱՍՊԱՐ ԿԻՄԻԵՃԻ:

Անդամք Ազգային Յանձնաժողովոյ

ԱՂԱԹՕՆԵԱՆ ՄԿՐՏԻԶ, ԱՍԼԱՆԵԱՆ ՍՏԵՓԱՆ, ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԱՆՈՒԿ,  
ՄԻՆԱՍԵԱՆ ՄԻՆԱՍ, ՌՈՒՄԻՆԵԱՆ, ՍՈՒՐԷՆԵԱՆ ՅՕՀԱՆՆԷՍ,  
ՕՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ:

**ՕՐԻՆԱԿ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ԴՐԱՆ**

Առ Խոհեմագարդ Տեղապահ Պատրիարքի Հայոց

Հայոց Պատրիարքարանի վիճակին եւ վարչութեան բարեկարգութեանը վրայօր, ասկէ առաջ Բարձրագոյն Դուռը կազմուած Յանձնաժողովին գրի առած Սահմանադրութիւնը՝ լոկ աշխարհական գործոց վերաբերեալ քանի մը կէտերը սրբագրուելէն ետքը, վեհափառ Արքային մատուցուեցաւ. և նորին կայսերական վեհափառութեան կողմէն ընդունուելով, պարունակած նիւթերուն այսուհետեւ կանոն բռնուիլը Ձեր Սրբազնութեան յանձնելու Արքունի հրամանը շնորհուեցաւ:

Ուստի յիշեալ Սահմանադրութիւնը ներփակեալ առ Ձեզ ուղարկելով՝ կը պատուիրեմք որ պարունակած նիւթերուն այսուհետեւ անթերի գործադրութեանը հսկելով, ըստ Բարձրագոյն կամաց Օգոստոսիառ կայսեր՝ ինչ որ պարտ ու պատշաճ է ի գործ դնելու հոգ տանիք:

17 Մարտ 1862

**Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն**

Օսմանեան Տէրութեան իր մահմէտական շեղող հպատակներուն շնորհած արտօնութիւնները՝ հաւասար են ըստ սկզբանց ամէնուն համար. բայց անոնց գործադրութեանը եղանակը՝ իւրաքանչիւրը ազգի մէջ ըստ պահանջման սեպհական սովորութեանց իւրեանց մասնաւոր կերպով տնօրինուած է:

Հայոց Պատրիարքը գլուխ է իր ազգին, և մասնաւոր պարագաներու մէջ՝ Տէրութեան հրամանաց գործադրութեան միջնորդ: Սակայն Պատրիարքարանի մէջ կրօնական գործոց համար՝ կրօնական ծողով մը և քաղաքական գործոց համար՝ քաղաքական ծողով մը կան հաստատուած: Այս երկու ծողովները ի պահանջել հարկին միանալով՝ խառն ծողով կը կազմեն, թէ՛ Պատրիարքը և թէ՛ այս երկու ծողովոց անդամները՝ Ազգին պատուաւոր անձանցմէ բաղկացեալ մէկ Անդհանուր ծողովոյ մէջ կ'ընտրուին:

որովհետև յիշեալ ժողովներուն պաշտօնն ու պարտաւորութիւնը, և կազմութեան եղանակը բաւական կանոններով սահմանուած չեն, և այս պատճառաւ զանազան անտեղութիւններ, և մասնաւորապէս Ընդհանուր ժողով կազմելու մասին տեսակ տեսակ դժուարութիւններ տեսնուած են.

որովհետև բարեկարգութեանց վերաբերեալ կայսերական հրովարտակին (\*) համեմատ՝ իւրաքանչիւր հասարակութիւն իր ունեցած արտօնութիւններն ու առանձնաշնորհութիւնները՝ որոշեալ ժամանակի մէջ քննելով, և ժամանակին բերմանցը և քաղաքակրթութեան արդեանցն ու արդի լուսաւորեալ վիճակին պահանջած բարեկարգութիւնները խորհրդածութեամբ որոշելով, Բարձրագոյն Գրան ներկայացնելու պարտաւորուած է,

որովհետև ամէն մէկ Ազգին կրօնական գլուխներուն շնորհուած իշխանութիւնն ու կարողութիւնը, իւրաքանչիւր հասարակութեան ազատուած նոր վիճակին ու դրութեան համաձայնեցնել պէտք է,

Ուստի Հայոց Ազգէն քանի մը պատուաւոր անձինքէ յանձնաժողով մը կազմուեցաւ, որ Ազգին համար պարտատեց սա հետեւեալ Սահմանադրութիւնը:

(\*) Խաթիր Հիւմայուն, 6/18 Փետր. 1856:

## Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

### Ս Ա Հ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

#### Հ Ա Յ Ո Յ

#### ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՁԲՈՒՆԲ

##### Ա.

Ազգին ամէն մէկ անհասր առ Ազգը պարտաւորութիւններ ունի. Ազգն ալ իր կողմէն առ ազգային ամէն մէկ անհաս պարտաւորութիւններ ունի. դարձեալ ամէն մէկ անհաս իրաւունքներ ունի՝ ազգէն և ազգն անհասներէն:

Ուստի Ազգն ու ազգային փոխադարձ պարտե՛զ կայուած են իրաւունքներ. անանկ որ մէկին պարտաւորութիւնը միւսին իրաւունքն են:

##### Բ.

Ազգայնոց պարսկանութիւնն է՝ ազգին պիտոյիցը պահանջած ծախսերուն մասնակից ըլլալ իւրաքանչիւր իր կարողութեան չափով. ազգին խընդրած ծառայութեանցը յծարակամ յանձնառու ըլլալ, և անոր բրած սփոթեանցը սիրով հնազանդիլ:

Ազգայնոց այս պարտաւորութիւնը ազգին իրաւունքն են:

##### Գ.

Ազգին պարսկանութիւնն է՝ ազգայնոց բարոյական, մտաւորական և հիւրական պիտոյիցը հոգ սանիլ, Հայաստանեայց եկեղեցոյ դաւանութիւնն ու աւանդութիւնը անարատ պահել. մարդկութեան հարկաւոր եղած անհրաժեշտ գիտելաց ուսումը՝ ամէն աստիճանի քէ՛ մանչ և քէ՛ աղջիկ տղայոց հաւասարապէս ծաւալել, ազգային հաստատութիւնը պայծառ պահել, հասոյքներն օրինաւոր կերպով աւելցնել, և ծախսերն իմաստութեամբ սնտել. ազգին ծառայութեանը մեհնջեապէս նուիրեալ անանց կացութիւնը բարեփել և ապագայն անդորրել. կարօտեցող խնամք սանիլ հայրաբար. ազգայնոց մէջ ծագած վեճերն արդարասիրութեամբ խաղաղել, և վերջապէս ազգային յառաջդիմութեան անձնանուէր աշխատիլ:

Ազգին այս պարտաւորութիւնը ազգայնոց իրաւունքն են:



Գ.

Ջազզը փոխանորդաբար ներկայացնող, եւ այս փոխադարձ պարտեաց կանոնաւոր կատարմանը տեսուչ ու մասնակաւոր կարգեալ իշխանութիւնը ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ կը կոչուի, որում յանձնուած է Օսմանեան Տէրութենէն յատուկ արտոնութեամբ, եւ Սահմանադրութեան միջոցաւ, Թուրքիոյ Հայոց ներքին գործերու տնօրէնութիւնը:

Ե.

Վարչութիւնը՝ ազգային ըլլալու համար, պէտք է երեսփոխաններու կողմէն ըլլայ:

Զ.

Երեսփոխանական Վարչութեան հիմը՝ ԻՐԱՒԱՆՑ ու ՊԱՐՏԵԱՑ սկզբունքն է, որ արդարութեան սկզբունքն է, իր ոյժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ, որ օրինաւորութեան սկզբունքն է:

Գ Լ Ո Ւ Ն Ա .

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա. — ՊԱՏՐԻԱՐՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՐԱԺԱՐՈՒՄ

Յօդ. 1. — Կոստանդնուպոլսոյ Պատրիարքը բոլոր Ազգային Ժողովոց նախագահն է, և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ, և մասնաւոր պարագաներու մէջ՝ տէրութեան հրամանաց գործադրութեան միջնորդն է:

Ուստի պէտք է որ Պատրիարք ընտրուելու անձը՝ ընդհանուր Ազգին վստահութեան ու յարգանացն արժանի ըլլալու համար՝ Պատրիարքական Աթոռին վայելուչ ամէն յատկութիւններն ու արժանաւորութիւնը ունենայ, և ի վաղուց անտի Պատրիարքութեան յատկացեալ եպիսկոպոսաց զասէն ըլլայ. միանգամայն տէրութեան կատարեալ վստահութեանն արժանաւոր, և գոնէ իր հօրմէն սկսեալ՝ օսմանեան հպատակ, և երեսունըհինգ տարին լրացուցած ըլլայ:

Յօդ. 2. — Երբ՝ Պատրիարքը վախճանելով կամ հրաժարելով և կամ ուրիշ որ և է պատճառաւ Աթոռը պարապ չնայ, Կրօնական և Քաղաքական Ժողովները մէկտեղ գալով Տեղապահ մը կ'ընտրեն, եւ անոր հաստատութիւնը կը խնդրեն Բարձրագոյն Դռնէն:

Ընդհանուր Ժողովը կ'ընտրէ զՊատրիարք. բայց Կրօնական և Քաղաքական Ժողովներն իրաւունք ունին ներկայացնան ցուցակով մը ընտրելեաց արժանաւորութեան աստիճան ի վրայ կարծիք տալու:

Պատրիարքի ընտրութիւնը հետեւեալ կերպիւ կ'ըլլայ.

Նախ և առաջ՝ Տեղապահը օսմանեան հողին վրայ գտնուող բոլոր եպիսկոպոսաց ցանկը կը շինէ, և իւրաքանչիւրին անուանը առջեւ՝ ըստ առաջին յօդուածոյ ընտրելութեան համար

պահանջուած հանգամանքը նշանակելով, Կրօնական ժողովոյն կը ներկայացնէ զայն:

Այս ժողովն ալ եկեղեցական համագումար ժողով հրաւիրելով, ընտրելաց ցուցակ մը կը պատրաստէ գաղանի քուէարկութեամբ, այսինքն իւրաքանչիւր անդամ թղթով մը վրայ կը գրէ այն ամէն եպիսկոպոսաց անունները՝ չորս կրօնական մասին անընդունելի չհամարիր: Ետքը՝ քուէհամարն ըլլալով, այն անունները յատուկ ցուցակի մը մէջ կ'առնուին քուէից ատուութեան կարգաւ:

Տեղապահը յիշեալ կերպիւ պատրաստուած ցուցակը քաղաքական ժողովոյն կը ներկայացնէ: Ան ալ՝ նշանակուած անձանց ըստ քաղաքականին արժանաւորութիւնը քննելէն ետքը, ամէնէն աւելի արժանաւորներէն հինգ ընտրելի կը զատէ քուէից առաւելութեամբ, և ասոնց ցուցակը Ընդհանուր ժողովոյն կը ներկայացնէ:

Միանգամայն եկեղեցական համագումար ժողովոյն պատրաստած առաջին ցուցակն ալ Ազգային Ընդհանուր ժողովոյն սրահին մէջ կ'ախուած կ'ըլլայ: Ընդհանուր ժողովը այս երկու ցուցակներէն՝ ընտրելեաց թէ՛ կրօնական և թէ՛ քաղաքական որպիսութեանց վրայ՝ երկու ձեռնհաս ժողովներուն կարծիքն իմանալով, կ'ընտրէ զՊատրիարք՝ գաղանի քուէարկութեամբ և բացարձակ առաւելութեամբ քուէից:

Ընդհանուր ժողովը կրնայ քաղաքական ժողովոյն ներկայացուցած ցուցակէն դուրս անձի մը վրայ ալ քուէ տալ. բայց պէտք է որ այն անձին անունը նշանակուած ըլլայ եկեղեցական համագումար ժողովոյն պատրաստած ցուցակին մէջ, վասն զի այս եկեղեցական ցուցակէն դուրս մնացած անձի վրայ ընտրութիւն չկրնար ըլլալ:

Եթէ առաջին անգամ քուէից բացարձակ առաւելութիւն չզոյանայ, երկու առաւելագոյն քուէ ստացողաց անունները Տեղապահին կողմէն Ընդհանուր ժողովոյ անդամներուն կը ծանուցուի. և երկրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկուքին վրայ կ'ըլլայ: Այս երկրորդ քուէարկութեան ատեն ազգային երեսփոխաններէն անոնք որ չկրնան ներկայ գտնուիլ, կարող են իրենց քուէները ստորագրեալ և կնքեալ

նամակաւ առ ժողովն ուղարկել, կամ Տեղապահին և կամ Ընդհանուր ժողովոյ ատենապետին ուղղելով զայն:

Քուէները յատուկ քուէատուփի մը մէջ դրուելէն ետքը՝ քուէհամարը կ'ըլլայ Ընդհանուր ժողովոյ գիւանին ձեռօք, և սոյն ժողովոյ մէջէն ընտրուած չորս եկեղեցական և չորս աշխարհական քննիչներու ներկայութեան:

Եթէ պատահի որ երկրորդ անգամ քուէարկութեան մէջ երկու անձանց հաւասար քուէ ելնէ, այն ատեն երկուքէն մէկը վիճակաւ կ'ընտրուի:

Յօդ. 3.— Ընտրութիւնը կատարուելէն ետքը տեղեկագիր մը կը շինուի՝ զոր բոլոր բաղմականք կը ստորագրեն. և Տեղապահի միջնորդութեամբ Բարձրագոյն Գրան կը մատուցուի. և Պատրիարքը կը հաստատուի ըստ վաղեմի սովորութեան՝ Կայսերական հրամանին համեմատ:

Յօդ. 4.— Ընդհանուր ժողովը հրաւիրանաց գիր կ'ուղարկէ Պատրիարք ընտրուած անձին քանի մը անձանց ձեռօք՝ եթէ Կ. Պոլսոյ մէջ է. և յատուկ հրաւիրակաւ, եթէ Կ. Պոլսէն դուրս տեղ է: Նորընտիր Պատրիարքը՝ այս հրաւիրանաց գիրը առնելով, Պատրիարքարան կուգայ և Մայր Եկեղեցոյ մէջ Ընդհանուր ժողովոյ առջեւ հանդիսաւոր ուխտ կ'ընէ սոյն օրինակ. «Առաջի Աստուծոյ և ի ներկայութեան Ազգային Ժողովոյ՝ հրապարակաւ ուխտեմ հաւատարիմ մնալ Տէրութեան և Ազգիս, և ճշմարտապէս հսկել Ազգային Սահմանադրութեան անթերի գործադրութեանը»: Ընմիջապէս՝ Տեղապահին պաշտօնը կը դադրի, և նորընտիր Պատրիարքը Բարձրագոյն Գրան հրաւերին վրայ՝ ուղղակի Օգոստոսիառ Կայսեր կը ներկայանայ, պաշտօնական կերպիւ իր պաշտօնը կը հաստատուի, և Բարձրագոյն Դուռը երթալով կը ծանուցուի:

Յօդ. 5.— Եթէ Պատրիարքը Սահմանադրութեան արամադրութեանցը հակառակ շարժի կամ վարուի, ամբաստանութեան տակ կ'ընկնի:

Յօդ. 6.— Պատրիարքին վրայ ամբաստանութիւն ընելու միայն Ընդհանուր ժողովը, Կրօնական ու քաղաքական ժողովներն իրաւունք ունին:

Ամբաստանող կամ բողոքող ժողովը, Բարձրագոյն Գրանէն Տրաման առնելով, Պատրիարքէն կը խնդրէ՝ որ Ընդհանուր Ժողով գումարէ:

Եթէ Պատրիարքը ասոր դէմ կենայ, եղելութիւնը կրկին անգամ Բարձրագոյն Գրան իմաց կը տրուի, որ այն ատեն բողոքին համեմատ՝ Կ. Պոլսոյ մէջ գտնուող եպիսկոպոսաց երիցագոյնին նախագահութեամբ Ընդհանուր Ժողով գումարելու հրաման կուտայ:

Ընդհանուր ժողովը իր մէջէն հինգ եկեղեցական և հինգ աշխարհական ընտրելով, տասն հոգիէ բաղկացեալ քննիչ Յանձնաժողով մը կը կարգէ. բայց պէտք է որ այս քննիչներուն մէջ՝ ամբաստանող կամ բողոքող անձանցմէ մարդ չգտնուի: Քննիչ յանձնաժողովը եղած ամբաստանութիւնները քննելէն ետքը՝ տեղեկագիր կուտայ Ընդհանուր Ժողովոյն, որ կ'որոշէ խնդիրը գաղտնի քուէարկութեամբ: Այս որոշումը պարունակող թուղթը պէտք է ստորագրուած ըլլայ որոշման կողմը քուէ տուող ժողովականներէն, և եթէ անով Պատրիարքին հրաժարուիլը վճռուած է, երկու ժողովոց պահնապետները նախագահ եպիսկոպոսին հետ Պատրիարքին երթալով, յիշեալ թուղթը անոր կը ներկայացնեն, որ այն ժամանակ Յղգին որոշ կամքը իմանալով հրաժարականը տալու պարտաւորեալ է: Իսկ եթէ չուզէ տալ, Բարձրագոյն Գրան իմաց կը տրուի որ պաշտօնէն կը ձգէ զՊատրիարք:

Յօդ. 7.— Հրաժարեալ Պատրիարքը վիճակաւոր եպիսկոպոսաց կարգը կ'անցնի, և անոր վրայ ըստ կանոնի պէտք եղածը կը անօրինուի Խառն Ժողովոյ կողմէն:

Պատժում եւ պարտաւորութիւնք

Յօդ. 8.— Պատրիարքին պարտաւորութիւնքն են Սահմանադրութեան սկզբանց համեմատ վարուիլ, և անոր ամէն կէտերուն ճշգիւ գործադրութեանը ուշի ուշով հսկել:

Պատրիարքը իրեն եկած գործերը ո'ր ժողովոյ կը վերաբերի նէ այն ժողովոյն կը յանձնէ՝ քննութեան և որոշման համար: Ժողովոց մէջ որոշուած գործոց վրայ Պատրիարքին քաղաքիւնները և կամ ուրիշ պաշտօնական գրութիւնները վաւ-



րական և գործադրելի չեն կրնար ըլլալ: Եթէ որոշուած գործերը կողմէն ալ կ'ընեալ և ստորագրուած ըլլան, երբ ստիպողական գործ մը պատահի, որոյ անօրինութեամբ համար կարելի չըլլայ մինչեւ ժողովոյն գումարման օրը սպասել և կամ արտաքոյ կարգի ժողով գումարել, Պատրիարքը կրնայ պէտք եղածը ինքնին անօրինել, իր վրայ առնելով պատասխանատուութիւնը. բայց պարտաւորեալ է եղելութիւնը արձանագրել տալ կանոնաւոր կերպիւ, և ո'ր ժողովոյն կը վերաբերի նէ՝ անոր յաջորդ նիստին ներկայացնել վաւերացման համար:

Յօդ. 9.— Պատրիարքը իր բացակայութեանը ատեն Աղգային ժողովներու մէջ արուած որոշումները պարունակող թուղթը դեռ չստորագրած, կարող է անոնց վրայ իր դիտողութիւններն յայտնելով: Խնդիրը կրկին քննութեան յանձնել: Իսկ այս վերաքննութիւնէն ետքը՝ պարտաւորեալ է նոյն թուղթերը ստորագրել, եթէ արուած որոշումը Սահմանադրութեան արամադրութեանցը անհամաձայն չգտնէ:

Յօդ. 10.— Պատրիարքը կրնայ Սահմանադրութեան սկզբանցը համեմատ չվարուող եկեղեցական մը, վարժապետ մը, եկեղեցւոյ, վանքի, դպրոցի և կամ հիւանդանոցի գործակալ մը, պաշտօնէն հանելու առաջարկութիւն ընել ձեռնհաս ժողովոյն կամ Խորհրդոյն:

Յօդ. 11.— Պատրիարքը իրաւունք չունի ինքնին լուծել և փոխել կրօնական և քաղաքական ժողովները և անոնց վերաբերեալ Խորհուրդները: Բայց երբ տեսնէ թէ անոնցմէ մէկը Սահմանադրութեան սկզբանցը հակառակ ընթացքի մէջ է, առաջին անգամին բացատրութիւն կուզէ այն ժողովոյն կամ Խորհրդոյն Ատենապետէն. երկրորդին՝ իմաց կուտայ անոր ապօրինաւոր ընթացքը և ի կանոնապահութիւն կը հրաւիրէ պայն. իսկ երրորդին՝ Ընդհանուր Ժողովոյն կը դիմէ, եթէ ամբաստանելին Աղգային ժողովներէն մէկն է, կամ քաղաք. ժողովոյն կը դիմէ, եթէ Խորհուրդներէն մէկն է, և պատճառները ցուցնելով՝ ամբաստանեալ ժողովոյն կամ Խորհրդոյն լուծուածը կ'առաջարկէ:

Յօդ. 12.— Պատրիարքը Աղգային սնտուկէն իրեն յատկացեալ ամսական ունենալով, ինք կը տեսնէ Պատրիարքարանին ներքին ծախքը:

**Բ. — ՊԱՏՐԻԱՐԲԱՍԿԱՆ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ**

Յօդ. 13.— Պատրիարքարանի մէջ Դիւանատուն մը պիտի հաստատուի պէտք եղած ազգային գրութեանց յատկացեալ:

Այս դիւանատունը երեք գրասենեակի պիտի բաժնուի:

Ա. Թղթակցութեան գրասենեակ որ Պատրիարքարանէն ուղարկուած և Պատրիարքարան եկած գրութիւններով կը զբաղի:

Բ. Արձանագրութեան գրասենեակ, որ Ազգային ժողովոց և Խորհրդոց վերաբերեալ թուղթերը կարգաւորելու կը զբաղի:

Գ. Ազգահամարի գրասենեակ, որ ազգայնոց քաղաքական վիճակագրութեանը, այսինքն՝ ծննդեան, ամուսնութեան եւ վախճանման վերաբերեալ արձանագրութեամբ կը զբաղի:

Այս վերջին գրասենեակէն կը տրուին Ազգայնոց թէ՛ ճանապարհորդութեան համար և թէ՛ ուրիշ անձնական գործառնութեանց համար պէտք եղած վաւերական թուղթերը, նաև ծննդեան, ամուսնութեան, վախճանման վկայագրերը:

Յօդ. 14.— Պատրիարքական Դիւանատունը պիտի ունենայ Դիւանապետ մի որ պատասխանատու է դիւանատան բոլոր գործառնութեանց: Քաղաքական ժողովը կ'ընտրէ և Պատրիարքը կ'անուանէ զայն Դիւանապետը կ'ընէ նաև Ընդհանուր ժողովոյն դիւանադպրութիւնը:

Դիւանապետը պարտաւորեալ է ամէն տարի՝ թէ՛ Կոստանդնուպոլսոյ մէջ և թէ՛ դուրսերը ծնած ամուսնացած և վախճանած ազգայնոց տոմարներուն օրինակները բերել տալ և Պատրիարքարանի Դիւանատան Ընդհանուր Ազգահամարին մէջ արձանագրել տալ: Դիւանապետը Հայերէն լեզուի քաջ հմուտ և Տաճկերէնի ու Գաղղիերէնի ալ վարժ անձ մը պիտի ըլլայ:

Յօդ. 15.— Դիւանատունը բաւական թուով Դիւանադպիրներ պիտի ունենայ: Ասոնք ալ հայերէն լեզուն քաջ գիտնալու են, և ամէն մէկը իր պաշտօնին կատարեալ հրամանութիւն ունենալու է: Ամէն մէկ դիւանադպիր ըստ իւր պաշտօնի պատասխանատու է այն ժողովոյն կամ Խորհրդոյն

որուն կը վերաբերի: Ամէնը մէկէն պատասխանատու են Դիւանապետին:

Յօդ. 16.— Ազգահամարի գրասենեակէն տրուած որ և է թուղթ և վկայագիր վաւերացեալ պէտք է ըլլայ Պատրիարքական կնիքով և Դիւանապետին ստորագրութեամբ:

**Գ. — ՊԱՏՐԻԱՐԲ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՍԻ**

Յօդ. 17.— Երուսաղէմի Պատրիարքը Ս. Յակոբայ Աթոռոյն ցկեանս գահակալն է. միանգամայն Հայոց, Ազգին սեպհական Երուսաղէմ գտնուած ուխտատեղիներուն տնօրէնն ու Ս. Յակոբայ վանուց Միաբանութեան նախագահն է:

Իր պարտաւորութիւնն է Ս. Երուսաղէմի վանուց Կանոնագրին տրամադրութեանց համեմատ վարուիլ, և անոր բարւոք գործադրութեանը հսկել:

Յօդ. 18.— Եթէ Ս. Երուսաղէմի Պատրիարքը Սուրբ Երուսաղէմի վանուց Կանոնագրին հակառակ վարուի, ամբաստանութեան տակ կ'ընկնի:

Յօդ. 19.— Պատրիարքին վրայ ամբաստանութիւն կ'ընայ ըլլալ կամ յիշեալ Միաբանութեան կողմէն և կամ Կոստանդնուպոլսոյ Կրօնական և Քաղաքական ժողովոց կողմէն:

Այսպիսի պարագայի մէջ՝ Ազգային Ընդհանուր ժողով կը գումարուի: Եւ եթէ եղած ամբաստանութիւնը քննուելով հիմնաւոր ըլլալը ստուգուի, Ընդհանուր ժողովը՝ վեցերորդ յօդուածին մէջ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքին վերաբերեալ տրամադրութեանց համեմատ՝ ըստ պահանջման իրեն, կամ ի կանոնապահութիւն կը հրաւիրէ Ղապարիարքն մասնաւոր բողոքագրով, և կամ կը պարտաւորէ զայն հետանալ Պատրիարքական Աթոռէն, և անոր պաշտօնը կը յանձնէ Տեղապահի մը՝ զոր Ընդհանուր ժողովը գաղտնի քուէարկութեամբ կ'ընտրէ Միաբանութեան մէջէն:

Յօդ. 20.— Երբ Ս. Երուսաղէմի Պատրիարքը վախճանի, Միաբանութիւնը իր մէջէն Տեղապահ մը կ'ընտրէ, և Ազգային ժողովները կը հաստատեն զայն:

Յօդ. 21.— Ս. Երուսաղէմի Պատրիարքը Կոստանդնու-

պոլսոյ Ազգային ժողովներուն կողմէն կ'ընտրուի: Բայց Միաբանութիւնը իրաւունք ունի իր կարծիքը յայտնելու ընտրելեաց արժանաւորութեան աստիճանին վրայ՝ ներկայացնան ցուցակաւ մի: Պատրիարքին վախճանելէն անմիջապէս ետքը՝ յիշեալ Տեղապահը Միաբանից Ընդհանուր ժողով կը գումարէ: Այս ժողովը անուանց ցուցակ մը կը պատրաստէ՝ Աստանդուպոլսոյ Պատրիարքի ընտրութեան համար Կոստանդնուպոլսոյ եկեղեցական համագումար ժողովոյն ըրած կերպիւն. բայց պէտք է որ Միաբանութեան ներկայացուելիք այս ցուցակը գոնէ եօթն ընտրելեաց անուն պարունակէ: Այս ցուցակը միաբանութեան կողմէն ստորագրեալ յայտագրով Աստանդուպոլսոյ Պատրիարքարանը կ'ուղարկուի:

Յօդ. 22.— Ս. Երուսաղէմի Պատրիարք ընտրուելու անձը գոնէ երեսուն և հինգ տարին լրացուցած, և ի ծնէ Օսմանեան Տէրութեան հպատակ, Միաբանութեան Եպիսկոպոսներէն կամ Ազրգապետներէն պէտք է ըլլայ: միանգամայն Միաբանութենէն զատուած մէկը պէտք է ըլլայ:

Միաբանութենէ զատուած չեն համարուիր այն անձինքը՝ որ Պատրիարքարանի ժողովոց կողմէն ազգային պաշտօնի մէջ գործածուած են՝ Երուսաղէմի Պատրիարքին հաւանութեամբ:

Յօդ. 23.— Կրօնական և քաղաքական ժողովները կանոն ժողով կազմելով, վերոյիշեալ ցուցակին մէջ յիշատակուած անձանց արժանիքը կը քննեն, և երեք ընտրելի որոշելով անունները Ընդհանուր ժողովոյն կը ներկայացնեն: Միաբանութեան կողմէն եկած ցուցակն ալ Ընդհանուր ժողովոյ պրահին մէջ կախուած կ'ըլլայ:

Ընդհանուր ժողովը ընտրելեաց վրայօք թէ միաբանութեան և թէ՛ Ազգային երկու ժողովոց կարծիքը իմանալով, անոնց մէջէն կրօնից, ուսման և բարի վարուց նկատմամբ ամենէն աւելի արժանաւորութիւն ունեցող անձը կ'ընտրէ գաղտնի բուեարկութեամբ և բուեից բացարձակ առաւելութեամբ:

Ընդհանուր ժողովոյ մէջ՝ Միաբանութեան կողմէն ներկայացուած ցուցակէն դուրս անձի վրայ բուեարկութիւն չկրնար ըլլալ:

Գ.— ԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 24.— Կրօնական ժողովը կը բաղկանայ տասն և չորս բանիւրուն եկեղեցականներէ, որոնք գոնէ երեսուն տարին լրացուցած, և գէթ հինգ տարիէ ի վեր ձեռնադրուած պիտի ըլլան:

Յօդ. 25.— Եկեղեցական համագումար ժողովը գաղտնի բուեարկութեամբ՝ Ազգային Կրօնական ժողովոյ անդամաց թուոյն եռապատիկը կ'ընտրէ, և ընտրելեաց անունները ստորագրեալ յայտագրով Ազգային Ընդհանուր ժողովոյն կը ներկայացնէ:

Ընդհանուր ժողովն ալ անոնց մէջէն գաղտնի բուեարկութեամբ կ'ընտրէ Կրօնական ժողովոյ անդամները: Տեղեկագիրը Պատրիարքին կողմէն Բարձրագոյն Գրան կը ներկայացուի. և Կրօնական ժողովոյ այսպէս ընտրուած անդամները Այսբերական հրամանաւ կը հաստատուին:

Յօդ. 26.— Կրօնական ժողովը երկու տարին անգամ մը Ապրիլի վերջը ամբողջ կը լուծուի, և Մայիսի սկիզբը կը նորոգուի: Այս ժողովոյ անդամները անմիջապէս վերընտրելի չեն. բայց երկու տարի ետքը կրնան նորէն ընտրուիլ:

Յօդ. 27.— Երբ Կրօնական ժողովոյ անդամներէն հրաժարական տուող և կամ ուրիշ պատճառաւ պակասներուն թիւը երեքի հասնի, անոնց տեղ ուրիշներ կ'ընտրուին Ընդհանուր ժողովով: Բայց մինչև որ այս ընտրութիւնն ըլլայ, Կրօնական ժողովոյ մէջ բոլոր անդամաց մեծագոյն մասը կը փնտուուի:

Յօդ. 28.— Կրօնական ժողովոյ պաշտօնն է ազգային կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնը: Եր պարտաւորութիւնքն են՝ Ազգին մէջ կրօնական զգացումը զարգացունել, Հայաստանեայց Եկեղեցոյ դաւանութիւնն ու աւանդութիւնները անխախտ պահել, եկեղեցեաց և եկեղեցականաց բարեկարգութեանը հսկել, եկեղեցականաց ներկայ փիճակը լաւցնելու և ապագան անդորրելու և ապահովցնելու միջոցները ձեռք բերելու հոգ տանիլ: Ազգային վարժարանաց երբեմն երբեմն այցելութիւն ընելով՝ քրիստոնէական վարդապետութեան ուսուցման վրայ հսկողութիւն ընել, արժանաւոր և բանիւրուն վարդապետներ և քահանաներ հասցնել, և Ազ-

գին մէջ ծագած կրօնական վէճերը քննելով՝ Եկեղեցւոյ օրինաց համեմատ լուծել:

Յօդ. 29.— Կրօնական ժողովը երբ չկարենայ ինքնին լուծել զուտ կրօնական կարեւոր խնդիր մը, Եկեղեցական համագումար ժողով կը կազմէ՝ Կոստանդնուպոլիս գտնուող եպիսկոպոսները, Եկեղեցեաց քարոզիչ Վարդապետները, Աւագերէցներն ու Աթոռակալները, և եթէ հարկ ըլլայ՝ նաև շրջակայ գաւառաց Առաջնորդները հրաւիրելով: Եթէ Եկեղեցական համագումար ժողովը ալ խնդիրը իր ձեռնհասութենէն վեր դատէ, այն ժամանակ՝ Ընդհանրական Կաթողիկոսին կը դիմէ ստորագրեալ տեղեկագրով:

Յօդ. 30.— Կրօնական ժողովոյ ամէն տեսակ տեղեկագիրները՝ միշտ անդամոց մեծագոյն մասին կողմէն ստորագրեալ պիտի ըլլան:

Յօդ. 31.— Թէ՛ Կոստանդնուպոլսոյ և թէ՛ գաւառներու մէջ՝ Վարդապետի ձեռնադրութեան համար պէտք եղած հրամանը Աղգային Կրօնական ժողովոյ կողմէն կը տրուի: Իսկ քահանայի ձեռնագրութեան համար՝ եթէ Պոլսոյ մէջ է՝ նոյն Կրօնական ժողովէն, և եթէ գաւառներու մէջ է՝ տեղւոյն Կրօնական ժողովէն կը տրուի:

Յօդ. 32.— Մինչև որ եկեղեցւոյ մը քահանաներն ու Թաղական Խորհուրդը նոր քահանայ ձեռնագրել տալու կարեւորութիւնը չտեսնեն, և ստորագրեալ տեղեկագրով Կրօնական ժողովոյ խնդիր չընեն, ձեռնագրութեան հրաման չտրուիր:

Յօդ. 33.— Կրօնական ժողովը կ'ընտրէ Կոստանդնուպոլսոյ եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերէցները, և Պատրիարքը կ'անուանէ զանոնք:

Յօդ. 34.— Կրօնական ժողովոյ մէջ ամէն տեսակ ընտրութիւն գաղտնի քուէարկութեամբ կ'ըլլայ:

Յօդ. 35.— Կրօնական ժողովը կանոնագիր մը պէտք է շինէ եկեղեցականաց ներկայ վիճակին բարելաւութեան և ապագային անդորրութեանը համար, որպէս զի իրենց հոգեւորական պաշտօնները կարենան ձրի կատարել:

Ե.— ԳՍՂԱՎԱՍՏ ԺՈՂՈՎ

Յօդ. 36.— Քաղաքական ժողովը կը բաղկանայ աղգային գործոց և տէրութեան օրինաց տեղեկ քսան աշխարհականներէ:

Յօդ. 37.— Քաղաքական ժողովոյ անդամները գաղտնի քուէարկութեամբ և քուէից բացարձակ առաւելութեամբ Աղգային Ընդհանուր ժողովոյ մէջ կ'ընտրուին, և տեղեկագիրը Պատրիարքի կողմէն Բարձրագոյն Գրան մատուցելով՝ Կայսերական հնամանա կը հաստատուին:

Յօդ. 38.— Քաղաքական ժողովը երկու տարին անգամ մը Ապրիլի վերջը ամբողջ կը լուծուի, և Մայիսի սկիզբը կը նորոգուի:

Այս ժողովոյ անդամները երկու տարի անցնելէն ետքը նորէն կրնան ընտրուիլ: Եւ թէպէտ առջի երկու տարին Քաղաքական ժողովոյ համար վերընտրելի չեն, բայց ուրիշ որ և է աղգային պաշտօնի մէջ կրնան գործածուիլ:

Յօդ. 39.— Եթէ Քաղաքական ժողովոյ անդամներէն մէկը, առանց բանաւոր պատճառ իմացնելու գրով, երեք անգամ իրարու վրայ ներկայ չգտնուի, նոյն ժողովոյ ատենապետի կողմէն անոր նամակ գրուելով՝ չգալուն պատճառը կը հարցուի: Եթէ պատասխան չառնուի, երկրորդ գրութեամբ իմաց կը տրուի իրեն որ՝ եթէ յաջորդ նիստին ալ ներկայ չգտնուի, իբրև հրաժարեալ պիտի համարուի. և եթէ գարձեալ չներկայանայ, հրաժարականը տուած պիտի սեպուի:

Յօդ. 40.— Երբ Քաղաքական ժողովոյ հրաժարական տուող կամ ուրիշ պատճառաւ պակտող անդամոց թիւը երեքի հասնի, անոնց տեղ ուրիշ անդամներ կ'ընտրուին Ընդհանուր ժողովով: Բայց մինչև որ այս ընտրութիւնն ըլլայ, Քաղաքական ժողովոյ մէջ բոլոր անդամոց մեծագոյն մասը կը փնտուուի:

Յօդ. 41.— Երբ Քաղաքական ժողովոյ պաշտօնն է Աղգային քաղաքական գործոց ընդհանուր տեսչութիւնը: Իւր պարտաւորութիւնքն են Աղգին բարեկարգութեան ու յառաջդիմութեան մտադրութիւն և փոյթ ունենալ, իր տեսչութեան տակ գտնուող Խորհրդոց կողմէն մատուցուած աղգօգուտ առա-

ջարկութիւնները ուշադրութեամբ քննել, և անոնց կարեւորութիւնը յայտնուելէն ետքը՝ հաստատել կամ գործադրութեան արգելքները բառնալու ջանք ընել:

Յօդ. 42.— Քաղաքական ժողովը իրեն եկած գործերը որ խորհրդոյ վերաբերեալ ըլլան՝ քննուելու համար այն խորհրդոյն կը յանձնէ, և մինչեւ որ անոր կարծիքը չառնու՝ չկրնար գործադրութեան ձեռնարկել: Եւ թէպէտ կրնայ իրաւացի պատճառներով հերքել մէկ խորհրդոյ ըրած որոշումը, բայց ինքնին ուրիշ անօրինութիւն չկրնար ընել նոյն նիւթին վրայ, և կը պարտաւորի դարձեալ նոյն խորհրդոյն յանձնել գործը: Քաղաքական ժողովը չի կրնար նաև փոխել կամ լուծել Ազգային խորհուրդներէն մէկը, քանի որ չտեսնէ զայն Սահմանադրութեան հիմնական սկզբանց հակառակ ընթացքի մէջ, թայց երբ տեսնէ անոնց մէկը այսպիսի ընթացքի մէջ, առաջին անգամին՝ բացատրութիւն կ'ուզէ նոյն խորհրդոյ ատենապետէն, երկրորդ անգամին՝ անոր գրով ազդարարութիւններ ընելով՝ ի կանոնապահութիւն կը հրաւիրէ իսկ երրորդին՝ անգամներ կը փոխէ, միայն թէ՛ այս մասին ունենցած պատճառները պիտի բացատրէ Ընդհանուր ժողովոյ ներկայացնելու երկամեայ տեղեկագրին մէջ:

Յօդ. 43.— Քաղաքական ժողովը երբ իրեն եկած քաղաքական գործերէն կարեւոր խնդրոյ մը լուծումը իր ձեռնահասութենէն վեր դատէ, Ընդհանուր ժողովոյն կը դիմէ:

**Զ. — ԳՍՂԱՔ. ԺՈՂՈՎՈՅ ԿՈՂՄԷՆ ԿԱԶՄՈՒՍՆԻ  
ԱԶԳ. ԿՈՐՀՈՒՐԳԻ ԵՒ ՀՈՂԱՍՏԱՐՉՈՒԹԻՒՆԵՐ**

Յօդ. 44.— Ուսումնական, Տնտեսական և Գաղափարական գործոց և վանօրէից տեսչութեան համար չորս խորհուրդ, մասախարարութեան պաշտօնով՝ երեք Հոգաբարձութիւն պիտի հաստատուի Քաղաքական ժողովոյ կողմէն: Այս խորհրդոց և Հոգաբարձութեանց անդամները երկու տարի պաշտօն կը վարեն, այն պայմանաւ՝ որ ամէն տարեգլուխ կիսով չափ նորոգուին:

Գաղափարական խորհրդոյ նախագահը և Պոլսոյ Պարբերքի փոխանորդն է:

**1. — Ուսումնական Խորհուրդ**

Յօդ. 45.— Ուսումնական խորհուրդը եօթն ուսումնական աշխարհականներէ կը բաղկանայ:

Ուսումնական խորհրդոյն պաշտօնն է՝ Հայոց Ազգին դաստիարակութեան և կրթութեան ընդհանուր տեսչութիւնը: Իր պարտաւորութիւնքն են Ազգային վարժարանաց բարեկարգութեանը հսկել, թէ՛ մանչ և թէ՛ աղջիկ տղայոց դաստիարակութեանը հոգ տանելու նպատակաւ հաստատուած ընկերութիւններուն խրախոյս տալ և ձեռնտու ըլլալ, դպրատանց դաստիարակներուն կացութիւնը լաւցնելու և ապագան անդորրելու խնամ տանիլ, Ազգին մէջ յաջողակ և քաջամուտ դասատուներ հասցնելու, և դպրոցական դասագիրքեր պատրաստելու ջանք և փոյթ ունենալ:

Ուսումնական խորհուրդը ազգային վարժարանաց մէջ ուսմունքնին լրացնող աշակերտաց վկայական կուտայ, ուսմանց դասագիրքերը կ'որոշէ, և տարեկան քննութիւնները կը կատարէ:

Իսկ կրօնական ուսմանց համար կրօնական ժողովն կը դիմէ, փասն զի այս ժողովը կ'որոշէ կրօնական գիտութեանց դասագիրքերը և դասատուները, քննութիւնները կ'ընէ և վկայականը կուտայ:

**2. — Տնտեսական Խորհուրդ**

Յօդ. 46.— Տնտեսական խորհուրդը կը բաղկանայ եօթն անասագէտ աշխարհականներէ, զորս Քաղաքական ժողովը կ'ընտրէ քուէից առաւելութեամբ:

Տնտեսական խորհրդոյն պաշտօնն է՝ և. Պոլսոյ մէջ գտնուած ազգային բոլոր հաստատութեանց և անոնց կալուածներուն մատակարարութեան ընդհանուր տեսչութիւնը իր պարտաւորութիւնն է՝ նոյն հաստատութեանց բարեկարգութեանը անխոնջ հսկել և հոգ տանիլ:

Տնտեսական խորհուրդը պէտք է հոգ տանի որ ամէն ազգային կալուած օրինաւոր կալուածագիր ունենայ: Թէ՛ և Պոլսոյ և թէ՛ գաւառներու մէջ գտնուած ազգային անշարժ

ստացուածոց կալուածագրերուն օրինակները՝ Տնտեսական  
խորհրդոյ ձեռնօք ժողովուրդով՝ Պատրիարքարանի զիւանատան  
մէջ պիտի պահուին:

Ազգային ո՛ր և է կալուածոյ գնումն ու վաճառուը  
չկրնար տեղի ունենալ, առանց Տնտեսական խորհրդոյ գիտու-  
թեան, Քաղաքական ժողովոյ հաճութեան և Պատրիարքի  
կնքով հաստատութեան:

Այս տրամադրութեանց ուժովը եկեղեցիներու Վիքե-  
վեղիտրքիւն ըսուած բանը վերցուած է Հայոց ազգին հա-  
մար:

II. Պոլսոյ և շրջակայից մէջ՝ ազգային ո՛ր և է շինու-  
թեանց կամ վերանորոգութեանց չկրնար ձեռնարկուիլ, ա-  
ռանց գիտութեան Տնտեսական խորհրդոյ և հաճութեան  
Քաղաքական ժողովոյ:

Տնտեսական խորհուրդը՝ Ազգային Նշխարից, Կապից և  
Հիւանդանոցի Հոգաբարձութիւններուն, նաեւ Թաղական  
խորհուրդներուն մատակարարութեանը վրայ հսկողութիւն  
պիտի ընէ, և ասոնց ամէն մէկէն որոշեալ ժամանակներ  
համար պահանջելով, Քաղաքական ժողովոյն պիտի հաղորդէ:

Տնտեսական խորհուրդը տարեգլխէն երկու ամիս առաջ՝  
յետագայ տարւոյ մէջ ըլլալիք հասոյթն ու ծախքը Նշխարից  
Հոգաբարձութենէն ստուգելով, հաշուեկշիռը պիտի պատ-  
րաստէ և Քաղաքական ժողովոյն ներկայացնէ:

3.— Դատաստանակիսն Խորհուրդ

Յօդ. 47.— Դատաստանական խորհուրդը կը բաղկանայ  
ութ իրաւագէտ, և ամուսնացեալ և քառասուն տարին լրա-  
ցուցած անձերէ, որոնց չորսը եկեղեցական և չորսը աշխար-  
հական պիտի ըլլան:

Դատաստանական խորհրդոյ նախագահը Պատրիարքի  
Փոխանորդն է, և անդամներուն բոլորն ալ Խառն ժողովոյ  
կողմէն կ'ընտրուին՝ բուէից առաւելութեամբ:

Դատաստանական խորհրդոյ պաշտօնն է՝ ընտանեկան  
վէճերը լուծել, և Բ. Գրան կողմէն Պատրիարքարան յանձ-  
նուած դատերը՝ յանձնարարութեան համեմատ քննել և  
որոշել:

Երբ պատահի այնպիսի դատ մը զոր Դատաստանական  
խորհուրդը իր ձեռնհասութենէն վեր դատէ, ըստ պահանջ-  
ման խնդրոյն կամ Կրօնական կամ Քաղաքական և կամ Խառն  
ժողովոյն յանձնուելուն հարկաւորութիւնը կը ցուցնէ:

Եթէ Դատաստանական խորհրդոյ մէջ որոշուած դատի մը  
դէմ բողոքէ դատապարտեալը, խնդիրը վերստին կը քննուի  
յիշեալ ժողովներէն մէկուն մէջ՝ որո՛ւն որ կը վերաբերի:

4.— Վանօրէից Խորհուրդ

Յօդ. 48.— Վանքերն ազգային սեպհական ստացուածքն ըլ-  
լալով, ազգին կը վերաբերի անոնց մատակարարութեան հա-  
սութից ու ծախուց ընդհանուր տեսչութեան և քննութեան  
իրաւունքը:

Ըստ որում հարկաւոր է որ ամէն Վանք իրեն համար յա-  
տուկ կանոններ ունենայ, Կեդրոնական Վարչութեան Կրօնա-  
կան և Քաղաքական ժողովները Խառն ժողով կազմելով, Իւ-  
րաքանչիւր վանքի Միաբանութեան, նաեւ Վանօրէից խոր-  
հուրդին կարծիքն առնելէ ետքը, պէտք եղած Կանոնադրու-  
թիւնը կը պատրաստեն, և Ազգային Ընդհանուր ժողովոյ  
հաստատել կուտան:

Սոյն կանոնադրութեանց հիմնական սկզբունքն են.

A. Իւրաքանչիւր Վանքի մասնաւոր մատակարարութիւնը  
իր Միաբանութեան կը վերաբերի: Իսկ ամէնուն վրայ ընդ-  
հանուր տեսչութիւն ընելու իրաւունքը Կեդրոնական Վար-  
չութեան կը վերաբերի, որ կը փորձագրէ Վանօրէից խորհր-  
դին ձեռօք:

B. Իւրաքանչիւր Վանքի վանահայրը իր Միաբանութեան  
կողմէն կ'ընտրուի, և Կեդրոնական Վարչութեան Խառն ժո-  
ղովոյ հաւանութեամբը Պատրիարքի ձեռօք կը հաստատուի:

Վանահայր ըլլալու անձը պէտք է որ երեսունուհինգ  
տարին լրացուցած, և Օսմանեան Տէրութեան հպատակ վար-  
դապետներէն ըլլայ:

Գ. Բոլոր Վանքերը Ազգին բարոյական զարգացմանը ծա-  
այնելու պարտաւոր են. ուստի ամէն մէկը իր կարողութեան



չափով՝ ունենալու է ընծայարան, թանգարան, Տպարան, Հիւանդանոց, և ասոնց պէս ուրիշ ազգօգուտ հաստատութիւններ :

Վանօրէից Խորհուրդը կը բաղկանայ եօթն անձերէ, զոր Քաղաքական Ժողովը կ'ընտրէ քուէից առաւելութեամբ :

Վանօրէից Խորհուրդին պաշտօնն ու պարտաւորութիւնն է՝ իւրաքանչիւր Վանքի կանոնաց գործադրութեանը հսկել և Վերատեսչութիւն ընել, եկամուտներն ու հասոյթները ստուգել, և ծախքերը քննել ու կանոնաւորել :

Վանօրէից Խորհուրդը կ'ընտրէ վանականներուն մէջէն իւրաքանչիւր Վանքի մատակարարութեան պաշտօնին համար պէտք եղած անձինքը. Ասոնք Վանահօր նախագահութեամբ՝ և իրենց վանքին յատկացեալ կանոններուն համաձայն Վանքը անտեսելով, որոշ ժամանակներ՝ հաշուեհամար կուտան Խորհուրդին :

5.— Ելեւմտից Հոգաբարձութիւն

Յօդ. 49.— Ելեւմտից Հոգաբարձութիւնը կը բաղկանայ եօթն հաշուագէտ անձինքէ, զոր Քաղաքական Ժողովը կ'ընտրէ քուէից առաւելութեամբ :

Ելեւմտից Հոգաբարձութեան պաշտօնն է ազգային կեդրոնական մատուկին անտեսութիւնն ու համարակալութիւնը :

Այս մատուկին մուտքն են՝ ազգային ընդհանուր տուրք, Կոստանդնուպոլսոյ Պատրիարքական Դիւանատան հասոյթք, և ասոնց մասնաւոր տեղ մը որոշելու ազգին անուանը եղած կտակ կամ նուէր : Եւքն են՝ Պատրիարքարանի և Դիւանատան սովորական ծախք. Կեդրոնական Վարչութեան ձեռքը եղած ազգային հաստատութեանց և կարօտեալ թաղերու տրուելիք նպաստ, և զանազան ուրիշ պատահական ծախք :

Ելեւմտից Հոգաբարձութիւնը կը հաւաքէ ամէն այս հասոյթները, և իր ձեռօք կ'ըլլան յիշեալ ծախքերը, միշտ Տնտեսական Խորհուրդին զիտութեամբը և Քաղաքական Ժողովոյ հաւանութեամբը :

Ելեւմտից Հոգաբարձութիւնը պարտաւոր է իր անտեսութեան յանձնուած ազգային մատուկին հաշիւը սոմարա-

կալութեան կանոնաւ կարգադրել, և որոշեալ ժամանակներ հաշուեցուցակ ներկայացնել Տնտեսական Խորհուրդին, որ ստուգելով և վաւերացնելով կը հաղորդէ Քաղաքական Ժողովոյն :

6.— Իսախայ Հոգաբարձութիւն

Յօդ. 50.— Կտակաց Հոգաբարձութիւնը կը բաղկանայ եօթն անձինքէ, որոց երեքը եկեղեցական և չորսը աշխարհական՝ Խառն Ժողովով կ'ընտրուին քուէից առաւելութեամբ :

Կտակաց Հոգաբարձութեան պաշտօնն է՝ ազգային կտակաց անօրէնութիւնը : Իր պարտաւորութիւնն է՝ կտակաց օրինաւոր կերպիւ և կտակարարին նպատակին և զիտաւորութեանը համեմատ գործադրութեանը հսկել :

Կտակաց Հոգաբարձութեան համար պէտք եղած մասնաւոր կանոնադրութիւնը՝ Խառն Ժողովը պիտի պատրաստէ Կտակաց Հոգաբարձութեան և Տնտեսական Խորհուրդին կարծիքն առնելով, և ընդհանուր Ժողովը պիտի հաստատէ :

Կտակաց Հոգաբարձութիւնը որոշեալ ժամանակներ իր պաշտօնին վերաբերեալ հաշիւները պիտի ներկայացնէ Տնտեսական Խորհուրդին, որ ստուգելով և վաւերացնելով պիտի հաղորդէ Քաղաքական Ժողովոյն :

7.— Հիւանդանոցի Հոգաբարձութիւն

Յօդ. 51.— Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը կը բաղկանայ ինն անձինքէ, զոր Քաղաքական Ժողովը կ'ընտրէ քուէից առաւելութեամբ : Ասոնց երկուքը վիպեալ բժիշկ պիտի ըլլան :

Հիւանդանոցի Հոգաբարձութեան պաշտօնն է՝ Ազգային Հիւանդանոցը և անոր սեպհական կալուածներն ու եկամուտները անտեսել, և անոնց հասոյթովն ու ազգային մատուկին նպաստիւր մատակարարել զայն :

Այս հաստատութիւնը չորս շրջանակի բաժնուելով, մէկը՝ աղքատիկ հիւանդները դարմանելու, երկրորդը՝ ծեր և անկար աղքատները պատսպարելու, երրորդը՝ խելագարները ինամելու, և չորրորդը՝ որը և անտէրունջ տղաքը գաստիարակելու պիտի յատկանան :

Այս շէնքին կարգադրութիւնն ու տնտեսութիւնը բժշկական և առողջապահական կանոնաց համեմատ պիտի տնօրինուին: Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը այս հաստատութեան տնտեսութեան մասին՝ Տնտեսական խորհուրդին, և դաստիարակութեան մասին՝ Ուսումնական խորհուրդին պատասխանատու է. և սոյն խորհուրդոց որոշեալ ժամանակներ համար պիտի տայ իր գործողութեանց վրայ:

**Է.— ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՔ**

Յօդ. 52.— Թաղական խորհուրդները կը բաղկանան ըստ տեղւոյն՝ հինգէն մինչեւ տասներկու անդամներէ:

Թաղական խորհուրդին պաշտօնն է՝ թաղին ժողովրդեան ազգային գործոց մատակարարութիւնը, եկեղեցւոյ և դպրատան հոգաբարձութիւնը, աղքատաց խնամակալութիւնը, եւ ազգայնոց մէջ պատահած վէճերուն քննութիւնն ու խաղաղարարութիւնը:

Իր պարտաւորութիւնքն են՝ թաղին եկեղեցւոյ պայծառութեանը խնամ տանիլ, թաղին մէջ թէ՛ աղջիկ և թէ՛ մանչ տղայոց դաստիարակութեան համար դպրատուններ հաստատելու ջանք ընել, և թաղին կարօտեալ ընտանեաց ձեռնտուութիւն ընել:

Յօդ. 53.— Ամեն թաղ մէկ մէկ Մնտուկ պիտի ունենայ՝ Թաղական խորհուրդին տնօրէնութեանը տակ:

Այս սնտուկին մուտքն են՝ թաղին ժողովրդեան կողմէ տրուած թաղական տուրքը, եկեղեցւոյ եւ դպրատան կալուածոց եկամուտները, եկեղեցւոյն հասոյթները, կտակաւ կամ ուրիշ կերպիւ եղած նուէրները ևլն.: Եւթն են՝ թաղին եկեղեցւոյն եւ դպրատանց ծախքն ու աղքատաց տրուելիք օգնութիւնները:

Ամեն Թաղական խորհուրդ իր թաղին մէջ եղած ծննդոց, ամուսնութեանց և վախճանմանց արձանագրութիւնը պիտի ընէ կանոնաւոր կերպով մասնաւոր Տոմարի մը մէջ:

Յօդ. 54.— Թաղական խորհուրդները՝ իրենց պաշտօնին վերաբերեալ գործոց մէջ Տեսուչ խորհուրդներուն հետ ուղղակի յարաբերութիւն ունին, այսինքն՝ դպրատանց համար

Ուսումնական խորհուրդին հետ, տնտեսական և դրամական գործոց համար՝ Տնտեսական խորհուրդին հետ, դատի վերաբերեալ գործոց համար՝ Գատաստանական խորհուրդին հետ: Եւ ասոնց ամէն մէկին որոշեալ ժամանակներ համար պիտի տան իւրաքանչիւրին վերաբերեալ գործոց վրայ:

Յօդ. 55.— Իւրաքանչիւր Թաղական խորհուրդ իր թաղին ժողովրդեան կողմէն կ'ընտրուի:

Ամէն ազգային անհատ որ քսան և հինգ տարին լրացուցած է, և ըստ Յ7րդ յօդուածոյ Սահմանադրութեան՝ ընտրողութեան իրաւունքէն դատաստանապէս զրկուած չէ, իրաւունք ունի մասնակից ըլլալ ընտրութեան Թաղական խորհուրդոյ անդամոց:

Յօդ. 56.— Թաղական խորհուրդոց պարտաւորութիւնն ու ընթացքը սահմանելու համար պէտք եղած կանոնադրութիւնը կրօնական և քաղաքական ժողովներուն ձեռօք պիտի շինուի:

Թաղական խորհուրդոց անդամներուն պաշտօնը չորս տարի կը տեւէ. հինգերորդ տարւոյն սկիզբը կը նորոգուին, և անմիջապէս վերընտրելի են:

**Ը.— ԱԶԳԱՅԻՆ ԸՆԳՂԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, Կազմութիւն եւ պարտաւորութիւն**

Յօդ. 57.— Ազգային Ընդհանուր Ժողովը հարիւր քառասուն երեսօխոխաններէ կը բաղկանայ որոնց՝

Ա. Մէկ եօթներորդ մասը, այսինքն քսանը, եկեղեցական երեսօխոխանք են, զոր կոտանդնուպօլսոյ մէջ գտնուող եկեղեցականք կ'ընտրեն:

Բ. Երկու եօթներորդ մասը, այսինքն քառասունը, գաւառներէն գալիք Ազգային երեսօխոխանք են:

Գ. Չորս եօթներորդ մասը, այսինքն ութսունը, կոտանդնուպօլսոյ թաղերէն ընտրուած երեսօխոխանք են:

Յօդ. 58.— Կրօնական և քաղաքական ժողովոց անդամները Ընդհանուր Ժողովին ներկայ կը գտնուին, բայց եթէ երեսօխոխան ընտրուած չեն՝ Ընդհանուր Ժողովին մէջ քուէ չունին:

Յօդ. 59.— Ընդհանուր ժողովը նիստ չկրնար ընել՝ մինչև որ անդամոց մեծագոյն մասը, այսինքն՝ գոնէ եօթանասուներեք հոգի ներկայ չըլլայ :

Յօդ. 60.— Ընդհանուր ժողովին պաշտօնն է.— Պատրիարքը, Կաթողիկոսը և Ազգին գլխաւոր պաշտօնատարները. և Կրօնական ու Քաղաքական ժողովոց անդամները ընտրել, Ազգային ժողովոց վարչութեանը հսկողութիւն ընել, սոյն ժողովներուն վերաբերեալ՝ բայց իրենց ձեռնհասութենէն վեր համարուած գործերը որոշել և վճռել, և Ազգային Սահմանադրութիւնը անխախտ պահել :

Յօդ. 61.— Ընդհանուր ժողովը կը գումարուի՝

Ա. Ըստ վաղեմի սովորութեան ամէն երկու տարին անգամ մը՝ Ազրիլ ամսոյ վերջերը, Ազգային Վարչութեան երկամեայ քննաքնն անդակագիրը մտիկ ընելու, և ելմական պաշտօնակալաց ձեռօք ժողովուած և ծախս եղած գումարներուն ընդհանուր հաշիւը տեսնելու և քննելու, Կրօնական և Քաղաքական ժողովոց բոլոր անդամները փոխելով՝ ուրիշներ ընտրելու, և յետագայ երկու տարուան մէջ Ազգային սուրբը ինչպէս անօրինութիւնքը սահմանելու համար :

Սոյն երկ-տարեկան ժողովը սկսած օրէն մինչև երկու ամիս տեւելով իր նիստերը կը վերջացնէ :

Ընդհանուր ժողովոյ այս նիստերուն մէջ՝ միանգամայն Ազգային Վարչութեան ժողովներուն անդամ գանուող երեսփոխանները ամէն խնդրոյ վրայ կրնան խօսիլ. բայց սուրբի և ընտրութեան խնդիրներէն զատ՝ ուրիշ խնդիրներու մէջ չեն կրնար քուէ տալ :

Բ. Կաթողիկոսի ընտրութեան մասնակից ըլլալու համար :

Գ. Կոստանդնուպոլսոյ և Երուսաղէմի Պատրիարքները ընտրելու համար :

Դ. Կրօնական և Քաղաքական ժողովոց մէջ, կամ Պատրիարքին ու ժողովոց մէջ պատահած անհամաձայնութիւնը բառնալու համար : Սոյն պարագայից մէջ՝ անհամաձայնութեան ենթակայ եղող կողմերը Ընդհանուր ժողովոյ մէջ խօսք միայն ունին և ո՛չ քուէ :

Ե. Ազգային Սահմանադրութեան վերաքննութեանը համար :

Եւ վերջապէս այնպիսի խնդիրներու համար որոց վրայ որոշում տալը Ընդհանուր ժողովոյն կը վերաբերի :

Սակայն այս տեսակ արտաքոյ կարգի նիստերուն տեղի ունենալէն առաջ՝ Ընդհանուր ժողովոյ գումարման պատճառը Պատրիարքարանի կողմէն Բարձրագոյն Գրան իմաց տրուելով, անոր հաճութիւնը կ'առնուի :

Յօդ. 62.— Պատրիարքը կը գումարէ Ընդհանուր ժողովը, Կրօնական և Քաղաքական ժողովոց մէկուն համահաճութեամբը, և կամ նոյն իսկ Ընդհանուր ժողովոյ Կրօնական և Քաղաքական ժողովոց մէկուն համահաճութեամբը, և կամ նոյն իսկ Ընդհանուր ժողովոյ անդամոց մեծագոյն մասին խորհրանօքը : Միայն թէ այս կերպ արտաքոյ կարգի ժողով գումարելէն առաջ՝ գումարման պատճառը Բարձրագոյն Գրան իմաց տրուելով, անոր հաճութիւնը առնել հարկ է :

### ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

Յօդ. 63.— Կոստանդնուպոլսոյ մէջ գանուող բոլոր եկեղեցականք՝ Պատրիարքի հրաւիրանօք՝ ապրիլ ամսոյ վերջը որոշեալ տեղ մը կը գումարուին, և գաղանի քուէարկութեամբ ու քուէից բացարձակ առաւելութեամբ Ազգ. Ընդհանուր ժողովոյ եկեղեցական անդամները կ'ընտրեն, թէ՛ հանուր ժողովոյ եկեղեցական անդամներէն և թէ՛ քահանաներէն. բայց պէ՛տք է որ ընտրելիք՝ դուրսերը պաշտօն չունենան, և հասակաւ երեսուն տարին լրացուցած, և զո՛նէ հինգ տարի առաջ ձեռնադրուած ըլլան, և ո՛ր եւ է զատասանի տակ չգտնուին :

Յօդ. 64. — Եկեղեցական երեսփոխանաց պաշտօնը տասն տարի կը տեւէ. և երկու տարին անգամ մը՝ հինգերորդ տարը փոխուելով կը նորոգուի : Այս հինգերորդ մասը առաջին ութ տարիներու մէջ՝ վիճակաւ պիտի որոշուի և հանուի. և թէ՛ վիճակաւ ելած և թէ՛ տասնամեայ պաշտօնը լրացուցած անդամները անմիջապէս վերընտրելի են :

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

Ա. — ԸՆՏՐՈՂՈՒՔԻԱՆ ԵՆ ԸՆՏՐԵԼՈՒՔԻԱՆ ԱՅԱՄԱՆԳ

Յօդ. 65. — Ընտրողական իրաւանց հիմն կը բռնուին՝ ազգային տուրքը, և անձնական արժանիքը:

Ազգային տուրքը ընտրողութեան իրաւունք տալու համար, պէտք է որ ընտրողը տարին զո՛նէ հօթանասուն ու հինգ զուրուշ ընդհանուր տուրք վճարէ:

Ընտրողութեան անձնական արժանիք իրաւունք ունեցողներն են՝ արքունի զեւաններուն և տէրութեան ուրիշ պաշտօններուն մէջ գտնուողներ. վկայեալ բժիշկները. օգտակար գրքերու հեղինակները. դպրատանց ուսուցիչները, և ազգին օգտակար ծառայութիւններ մատուցած անձինք:

Յօդ. 66. — Ընտրողութեան իրաւունք ունին քսան և հինգ տարին լրացուցած անձինք. սակայն ընտրողք հարկ է որ Օսմանեան տէրութեան հպատակ ըլլան:

Յօդ. 67. — Ընտրելու իրաւունքէն դատաստանապէս զրկեալ են հետեւեալ չորս դաս անձինքը.

Ա. Քրէական յանցանք գատապարեհալները, որոնք ըստ պատժական օրինաց Տէրութեան՝ քաղաքականապէս մեղեալ կը համարուին:

Բ. Ազգային գործոց մատակարարութեանը մէջ նենգութեամբ բռնուած, և Ազգ. Ժողովներէն մէկուն կողմէն գատապարտուած անձինք, որոց համար ազգային գործերու մէջ չգործածուիլը վճռուած ըլլայ գատող ժողովին կողմէն:

Գ. Տէրութեան գատարաններուն կողմէն զգաստացուցիչ պատիժ կրողները, որոց պատժոյն պայմանաժամը դեռ լրացած չէ:

Դ. Խեղադարութեան պատճառաւ անբաւական գատեալները, որոց կատարելապէս առողջացեալ ըլլալը օրինաւոր կերպիւ հաստատուած չրլայ:

Յօդ. 68. — Ընտրելի են ազգին այն ամէն անհասները, որոնք երեսուն տարին լրացուցած ըլլալով, Օսմանեան հպատակ, Տէրութեան օրինացը տեղեակ, և ազգային գործոց հմուտ են և ընտրողութեան իրաւունքէն ըստ 67րդ յօդուածոյ զրկուած չեն:

Բայց Կոստանդնուպոլսոյ թաղերուն կողմէն ընտրուելիք ութսուն երեսփոխանաց զո՛նէ հօթը՝ աստիճանաւոր անձինք ըլլալու են:

Բ. — Եղանակ ըՆՏՐՈՒՔԻԱՆ

Յօդ. 69. — Կոստանդնուպոլսոյ թաղերէն և գաւառնէրէն ընտրուելիք երեսփոխանաց թաշխարհն ցուցակը շինելու համար, ամէն երկու տարի Փետրուար ամսոյ սփիւրջը՝ Ազգ. Կրօնական և Քաղաքական Ժողովները, Տեսուչ Խորհրդոց ատենապետներուն հետ մեկտեղ. Համախորհուրդ ժողով կը կազմեն, և Պատրիարքական Գիւանատան ընդհանուր ազգահամարին նայելով, ամէն մէկ թաղին ու գաւառին կողմէն քանի՛ երեսփոխան ընտրուելիքը կ'որոշին, Պոլսոյ թաղերուն համար՝ ընտրողաց թիւը, և գաւառներուն համար՝ բնակչաց թիւը հիմն բռնելով: Եւ այս կերպով շինուած ցուցակին համեմատ՝ իւրաքանչիւր թաղի և գաւառի տալու երեսփոխանաց թիւը Պատրիարքի ձեռօք անոնց կը ծանուցանեն:

Երեսփոխանաց պաշտօնը տասն տարի կը տեւէ. և երկու տարին անգամ մը՝ թէ՛ Կոստանդնուպոլսոյ թաղերէն և թէ՛ գաւառներէն ընտրուած ազգային երեսփոխաններուն հինգերորդ մասը կը փոխուի և կը նորոգուի: Այս հինգերորդ մասին ընտրութիւնը պիտի կատարուի ամէն երկու տարին անգամ մը, թէ՛ թաղերուն և թէ՛ գաւառներուն կողմէն, մէջերնին փոփոխակի կարգ պահելով:

Այս փոփոխակի կարգը առաջին ութ տարիներուն մէջ՝ վիճակաւ պիտի որոշուի. սա՛ պայմանաւ որ եթէ թաղի մը ընտրողները և կամ գաւառի մը բնակչաց թիւը աւելցած կամ պակաս է, այն թաղին կամ գաւառին տալու երեսփոխանաց թիւն ալ համեմատութեամբ պիտի աւելնայ կամ պակսի:

Վասն ձանեալ կամ հրատարեալ երեսփոխանաց տեղ ընտրուելիք անձինքն ալ՝ ամէն տարի տարեդիտէն երկու ամիս առաջ պէ՛տք է ընտրուին:

Թաղական երեսփոխանները և Պոլսոյ թաղերուն բնակչաց կողմէն պիտի ընտրուին: Իսկ գաւառական երեսփոխան-

ները իւրաքանչիւր գաւառի Ընդհանուր Ժողովոյ կողմէն պիտի ընտրուին:

Յօդ. 70.— Թէ՛ Պոլսոյ թաղերէն և թէ՛ գաւառներէն ուզուած երեսփոխանները՝ հարկ չէ՛ որ ընտրող թաղին կամ գաւառին բնակիչներէն ըլլան. բաւական է որ կոստանդնուպոլսոյ մէջ բնակին, իրենց ներկայացուցած թաղին կամ գաւառին ազգային գործոցը հմուտ ըլլան, և ազգասիրութեամբ՝ ուղղութեամբ և արդարախոնութեամբ ընտրողաց յարգն ու համարումը ստացած անձինք ըլլան:

Ազգային երեսփոխանները ո՛չ թէ զիրենք ընտրող թաղին կամ գաւառին երեսփոխանները կը համարուին Ընդհանուր Ժողովոյ մէջ, այլ Ազգին երեսփոխաններն են՝ համագործխանութեամբ:

Յօդ. 71.— Երկու տարին անգամ մը Պոլսոյ թաղերուն կողմէն ընտրուելիք երեսփոխանաց հինգերորդ մասին համար՝ Պատրիարքը Փետրուար ամսոյ մէջ ընտրող թաղերուն ամէն մէկուն կը ծանուցանէ քանի՛ երեսփոխան ընտրելիքը՝ ընտրողութեան և ընտրելութեան պայմաններն ալ յիշեցնելով:

Այս ծանուցման վրայ՝ Թաղական Խորհուրդները երեսփոխանաց ընտրութեանը կը ձեռնարկեն: Բայց ընտրական գործողութեանց համար թաղին քարոզիչը՝ կամ անոր չգրտնուած ժամանակը՝ Աւագերէցը նախագահութիւն կ'ընէ, և թաղին բնակիչներէն երեքէն մինչև վեց պատուաւոր անձինք Թաղական Խորհուրդին վրայ կ'աւելցուին:

Այս կերպով կազմուած Ընտրողական Ժողովներուն ամէն մէկը՝ իր թաղին մէջ ընտրողութեան իրաւունք ունեցողներն ստուգելով, այբուբէնի կարգաւ ընտրողաց ցանկ մը կը պատրաստէ, և ութ օր բաց մնալու պայմանաւ Թաղական Խորհրդարանի մէջ կախել կուտայ:

Ընտրողական Ժողովը ընտրելեաց որոշումը զիւրացնելու համար՝ ուզուած երեսփոխաններուն թիւէն եռապատիկ աւելի ընտրելեաց ցուցակ մըն ալ կը պատրաստէ, և այն ալ կախել կուտայ Խորհրդարանին մէջ: Սակայն ընտրողք ամենեւին պարտաւորեալ չեն ընտրելեաց ցուցակին հետևելու:

Գաւառներուն մէջ ալ՝ գաւառական Ընդհանուր Ժողովոց անդամները միեւնոյն կերպով կ'ընտրուին:

Գ.— Քուէարկութիւն

Յօդ. 72.— Ընտրողաց ցանկին բացուելէն շաբաթ մը ետքը՝ կիւրակէ առաւօտ, ժամերգութեան աւարամանէն ետքը, Թաղական Խորհրդարանի մէջ քուէարկութեան կ'սկսուի սապէս:

Թաղական Խորհրդոյ Նախագահը՝ ընտրողաց ցանկը ձեռքն առած կարգաւ կը կանչէ ընտրողները, որք ընտրողաց ցանկին մէջ՝ իրենց անուան առջև ստորագրելէն վերջը, քանի՛ երեսփոխան ուզուած է նէ՛ այնքան անձանց անուն թուղթի մը վրայ կը գրեն վերէն ի վար կարգաւ, և ամէն մէկ անուան առջև մականուն, բնակութիւն և արուեստ նըշանակելով՝ թուղթը կը ծալլեն, և յատկապէս պատրաստուած քուէտուփին մէջ կը ձգեն: Իսկ եթէ ընտրողք պատճառաւ իւր չը կրնան գալ Խորհրդարան, ստորագրեալ նամակաւ մը քուէնին կ'ուղարկեն:

Յօդ. 73.— Քուէարկութիւնը գաղտնի է, ուստի պէտք է որ քուէարկուք առանձին գրեն իրենց քուէթուղթը, որպէս զի ուրիշ մը չկրնայ տեսնել դրած անունները:

Յօդ. 74.— Քուէարկութիւնը սկսած օրը պէտք է լմնայ: Ընտրողներէն ո՛վ որ իր քուէն նոյն օրը չներկայացնէ, ետքը բողոքելու իրաւունք չունի:

Յօդ. 75.— Ոչ ոք պիտի կարենայ միանգամայն երկու թաղի մէջ քուէ տալ:

Յօդ. 76.— Ընտրութեան մասին միացեալ թաղերը և թեմերը՝ եթէ իրարու մօտ ըլլան, ընտրողները մէկտեղ ժողովուրդով քուէարկութիւն կ'ընեն: Իսկ եթէ իրարմէ հեռի ըլլան՝ իւրաքանչիւր թաղ կամ թեմ գատ քուէարկութիւն կ'ընէ, և ետքը երկու կողման քուէարկութեանց արդիւնքը կը միացնեն:

Յօդ. 77.— Քուէարկութիւնը կատարուելէն ետքը նոյն օրը մի և նոյն նիստի մէջ՝ Թաղական Խորհուրդին առջև քուէտուփը կը բացուի. և այս բանիս համար որոշուած քրննիչները քուէներն համրելով, քուէարկուաց թուղթն հետ կը բաղդատեն:

Եթէ տարբերութիւն գտնուի, և Թաղական Խորհուրդը խարդախութեան կասկած ունենայ, մինչեւ առաջիկայ կիրառի՝ միւս օր մը նորէն քուէարկութիւն ընել կ'որոշուի:

Նմանապէս՝ եթէ ուզուած երեսփոխանաց թիւը առաջին անգամին չլցուի, մնացածին համար երկրորդ անգամ քուէարկութիւն կ'ըլլայ միւս օր մը:

Յօդ. 78.— Եթէ պատահի որ քուէարկուներէն մէկը պէտք եղածէն աւելի թուով անուն գրած ըլլայ իր քուէթուղթին մէջ, նոյն թիւէն վերջը եկած անունները անընդունելի են. նմանապէս անվաւեր կը համարուին այն քուէթուղթերը՝ որոնց մէջ գտնուած անունները վերէն ի վար կարգաւ գրուած չեն:

Յօդ. 79.— Քուէարկուաց թուոյն կէսէն աւելի քուէ նտացողներուն մէջէն՝ առաւելագոյն քուէ ստացող անձինք՝ երեսփոխան ընտրուած են. Իւ եթէ երկու անձանց հաւասար քուէ տրուած ըլլայ, երիցագոյնը ընտրեալ է:

Յօդ. 80.— Եթէ առաջին անգամ քուէարկութեամբ առաւելութիւն չստացուի, Թաղական Խորհուրդը կը ծանուցանէ առաւելագոյն քուէ ստացող երկու անձանց անունները, և երկրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկու անունաց վրայ կ'ըլլայ:

Յօդ. 81.— Ամէն Թաղական Խորհուրդ՝ իր թաղէն ընտրուած երեսփոխանաց անունները Պատրիարքին կը ներկայացնէ մասնաւոր տեղեկագրով մը, որուն մէջ պէտք է ձշղիւ նշանակուած ըլլայ ընտրեալներուն անունը, մականունը, բնակութիւնը, արհեստը, և քուէարկութեան բոլոր պարագաները:

Պատրիարքը այս տեղեկագրերը կը ներկայացնէ Քաղաքական Ժողովին, որ գանձը քննելով կը ստուգէ երեսփոխանաց ընտրելութեան պայմանները:

Այսպէս ստուգուելէն ետքը, Պատրիարքը պաշտօնական կերպիւ կը ծանուցանէ երեսփոխանաց ամէն մէկուն ըստ օրինի ընտրութիւնը, և կը հրաւիրէ գանձը Ընդհանուր Ժողովոյ ատեան կազմել որոշեալ օր մը:

Յօդ. 82.— Ընդհանուր Ժողովը իր առաջին նիստին մէջ՝ Քաղաքական Ժողովին քննած տեղեկագրերը մտիկ ընելով, եղած ընտրութիւնները և երեսփոխանաց իշխանութիւնը կը վաւերացնէ, որով Ընդհանուր Ժողովը ըստ օրինի կազմուած կ'ըլլայ:

Ընդհանուր Ժողով կրնայ գումարուիլ, երբ Կոստանդնուպոլսոյ երեսփոխանաց մեծագոյն մասը ընտրուած ըլլայ, առանց սպասելու գաւառական երեսփոխանաց ընտրութեան վախճանին՝ որոնց լուրը մէկ կողմէն Կոստանդնուպոլսոյ հասնելու վրայ կ'ըլլայ:

Յօդ. 83.— Եթէ մէկը քանի մը թաղերու կամ գաւառներու կողմէն ընտրուած ըլլայ, ինք կ'որոշէ ո՞ր թաղին կամ ո՞ր գաւառին երեսփոխանութիւնն ընդունիլը, և եթէ ինք չուզէ որոշել, Ընդհանուր Ժողովը վիճակաւ կ'որոշէ:

Յօդ. 84.— Երեսփոխանաց անուան ցուցակը Ընդհանուր Ժողովոյ սրահին մէջ կախուած պիտի մնայ՝ այբուբէնի կարգաւ շինուած. և իւրաքանչիւր անուան առջեւ պիտի նշանակուի հրաժարում, վախճանում, և այլ ի՞նչ որ պատահի Այս ցուցակը երկու տարին անգամ մը պիտի նորոգուի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՔ ԺՈՂՈՎՈՑ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՑ

Յօդ. 85.— Ամէն ժողով և խորհուրդ պիտի ունենայ ատենական Գիւան մը, որ կը բաղկանայ մէկ ատենապետէ մը, մէկ ատենադպրէ, և երբեմն նա՛նք ատենապետի և ատենադպրի փոխանորդներէ: Ասոնց ամէնն ալ հարկաւ ժողովոյ անդամներէն պիտի ըլլան:

Ատենական Գիւանը տարին անգամ մը կը նորոգուի, և անդամներն անմիջապէս վերընտրելի են:

Յօդ. 86.— Ասոնց մեծագոյն մասի ներկայութեան Ատեան չի կրնար կազմուիլ:

Յօդ. 87.— Խնդիր մը լաւ քննուելէն, և անոր վրայ ներկայ ժողովականաց կարծիքը հասկցուելէն վերջը, քուէի կը դրուի, և ձայնից առաւելութեամբ որոշում կը արուի: Երբ ձայնից հաւասարութիւն պատահի, եթէ նախագահը ներկայ է՝ անոր կարծեաց կողմը կը հակի որոշումը, եթէ ո՛չ՝ Ատենապետին կողմը:

Յօդ. 88.— Խառն ժողովոյ մէջ քննուած որ և է խնդրոյ որոշում արուելու համար, պէտք է որ երկու ժողովները զատ քուէարկութիւն ընեն: Երբ երկուքին ալ մեծագոյն մասը միեւնոյն որոշումն ըրած ըլլայ, խնդիրը լուծուած է. իսկ եթէ որոշումնին տարրեր ըլլայ, կարծեաց անհամաձայնութիւն կը համարուի. և հետեւաբար խնդրոյն որոշումը Ընդհանուր ժողովին կը ձգուի:

Խառն ժողովը օրինաւորապէս գումարուած համարուելու համար, պէ՛տք է որ ժողովոց երկուքին ալ մեծագոյն մասը ներկայ գտնուին:

Յօդ. 89.— Ընդհանուր ժողով գումարուելէն զոնէ վեց օր առաջ՝ պէտք է որ Պատրիարքարանի կողմէն հրաւիրանաց գրեր յուղարկուին անդամներուն:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Տ ՈՒ Ր Ք

Յօդ. 90.— Ամէն ազգային անհատ որ չափահաս է եւ վաստակ ու շահու աէք, պարտական է տրօք մասնակից ըլլալ Ազգային ծախուցի:

Այս աուրքը տարեկան է. եւ բաշխման հիմը կը բոնուի իւրաքանչիւր անհատի կարողութիւնը:

Յօդ. 91.— Ազգային աուրքը երկու տեսակ է. մէկը ընդհանուր՝ որ ընդհանուր ծախուց յատկացեալ է, եւ կը հաւաքուի Պատրիարքարանին կողմէն, Ազգ. կեդրոնական սնտուկին համար. եւ միւսը մասնաւոր՝ որ իւրաքանչիւր թաղի մասնաւոր ծախուց յատկացեալ է, եւ կը հաւաքուի թաղական խորհրդոյ կողմէն, թաղական սնտուկներուն համար:

Յօդ. 92.— Կոստանդնուպոլսոյ մէջ ընդհանուր աուրքի բաշխման եւ հաւաքման եղանակը՝ Քաղաքական ժողովին մէջ կ'որոշուի, եւ Ընդհանուր ժողովով կը հաստատուի իսկ մասնաւոր աուրքը՝ ամէն թաղ իր խորհրդոց մէջ կ'որոշէ եւ կը հաստատէ:

Սոյնպէս կը անօրինուին նաեւ գաւառներուն մէջ Գաւառական ընդհանուր աուրքն ու թաղական մասնաւոր աուրքը:

Յօդ. 93.— Գաւառներուն կողմէն Ազգային Պատրիարքարանի Սնտուկին արուելու միջեւ դարպ ստորութիւն եղած աուրքին բաշխման և հաւաքման եղանակը՝ Ընդհանուր ժողովը պիտի որոշէ, և Բարձրագոյն Գրան հաճութեամբը պիտի գործադրուի:

ԱԶԳԱՅԻՆ ԳԱԻԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 94.—Առաջնորդը Գաւառական ժողովոց նախագահն է, և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ:

Իր պարտաւորութիւնն է գաւառին մէջ Աղգային Սահմանադրութեան գործադրութեանը հսկել:

Յօդ. 95.— Առաջնորդը չպիտի կարենայ վանքերու մէջ բնակութիւն հաստատելով՝ պաշտօնին տեղէն հեռանալ, այլ գաւառին գլխաւոր քաղաքին մէջ Աղգային Առաջնորդարանը պիտի բնակի, ուր կը գումարուին և Գաւառական ժողովները:

Երբ Առաջնորդ մը միանգամայն ևս վանահայր ըլլայ, եթէ վանքը մէկ օրուան ճամբայ հեռի է Առաջնորդանիստ քաղաքէն՝ կրնայ երկու պաշտօնն ալ մէկանգ վարել, երբեմն երբեմն վանքին այցելութիւն ընելով: Բայց եթէ հեռաւորութիւնը օրուան մը ճանապարհէ աւելի ըլլայ, պէտք է որ վանքին մէջ իրեն փոխանորդ կարգելով, ինք քաղաքը բնակի: Սակայն հարկ եղած ժամանակը իր Վիճակին ամէն կողմը այցելութեան կրնայ երթալ:

Յօդ. 96.— Կոստանդնուպոլսոյ մէջ եղածին նման՝ գաւառներուն մէջ ալ ամէն թաղ պիտի ունենայ ԹԱԳԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ մը, ԹԱԳԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ մը, և ԹԱԳԱԿԱՆ ԳԻՒՆԱՆՆԱՏՈՒՆ մը:

Նմանապէս Առաջնորդանիստ քաղաքին մէջ պիտի հաստատուին ԿՐՕՆԱԿԱՆ և ԲԱԳԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ: Եւ քաղաքական ժողովին անօրէնութեան տակ՝ ԳԱՒԱՌԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ մը:

Նաև Առաջնորդարանի մէջ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԳԻՒՆԱՆՆԱՏՈՒՆ մը հաստատուելով, առաջնորդական վիճակին բոլոր ժողովրդոց թաղական ազգահամարի տուժարները հո՛ն պիտի ժողովուին, և Գաւառական ընդհանուր ազգահամար պիտի կազմուի:

Յօդ. 97.— Առաջնորդի ընտրութիւնը նոյն և նման Պատրիարքի ընտրութեան, Գաւառական Ընդհանուր ժողովով կ'ըլլայ, և ընտրութեան տեղեկագիրը տեղւոյն խառն ժողովոյն միջոցաւ Պատրիարքին կ'ուղարկուի: Պատրիարքը կեդրոնական Վարչութեան խառն ժողովոյ համահաճութեամբ կ'անուանէ զԱռաջնորդը, և Բարձրագոյն Գրան իմաց տալով պաշտօնական հրամանագիրը կ'ընդունի:

Յօդ. 98.— Գաւառական ժողովները կեդրոնական Վարչութեան ժողովներուն վերաբերեալ տրամադրութեանց համեմատ պիտի կազմուին, և պաշտօննին ու պարտաւորութիւննին նոյն և նման են:

Բայց Գաւառական ժողովներուն անդամոց թիւը՝ իւրաքանչիւր վիճակի համար միանգամ պիտի սահմանուի, ամէն մէկ գաւառի բնակչաց թուոյն համեմատութեամբ:

Մինչև որ ազգային տուրքը գաւառներուն մէջ օրինաւոր կերպիւ հաստատուի, տէրութեան առաջին և երկրորդ և երրորդ աստիճանի տուրք առող անձի'նք միայն պիտի ընտրեն Գաւառական Ընդհանուր ժողովոց անդամները: Իւ այս ժողովներուն կազմութեան կերպը՝ իւրաքանչիւր վիճակի բնակչաց թուոյն նայելով, կեդրոնական Վարչութիւնը պիտի որոշէ, Առաջնորդաց հետ խորհրդակցելով:



Գ Լ Ո Ւ Խ Ե

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Յօդ. 99.—Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբունքը անփոփոխելի են: Բայց երբ փորձառութեամբ ի՛նչ ի՛նչ արամադրութեանց փոփոխութիւնը հարկաւոր դատուի, Ընդհանուր ժողովը՝ Սահմանադրութեան հաստատութենէն հինգ տարի ետքը՝ Վերաքննութեան Յանձնաժողով մը կը կազմէ, Կրօնական եւ Քաղաքական ժողովներէն երեքական անդամ, չորս Տեսուչ Խորհուրդներէն երկերկու անդամ, եւ ասոնցմէ զատ Ընդհանուր ժողովոյ մէջէն կտոմ գրսէն լից հոգի, ընդամէնը քսան անդամ ընտրելով: Այս յանձնաժողովը կը սահմանէ հարկաւոր դատուած փոփոխութիւնները. որ Ընդհանուր ժողովը լաւերացնելէն ետքը, Բարձրագոյն Կրօն կը ներկայացուին, եւ Կայսերական հրամանին համեմատ կը գործադրուին:

Վ Ե Ր Զ



ԹՈՒՈՒՅԻԿ ԱԿՆԱՐԿ ՄԸ

ԱՐՄԻԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՎԱՅՈՒՍՆՈՅԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՅ ՎՐԱՅ

1.

«ՄԱՏԵՆԱՇԱՐ ԱԶԴԱԿ»

Մեր հրատարակութիւններու անդրանիկ շարքն է ՄԱՏԵՆԱՇԱՐ ԱԶԴԱԿը, նուիրուած՝ առանձնապէս գեղարուեստական գրականութեան:

Մատենաւար Ազգայի մաս կը կաղմեն ո՛չ միայն Արզի Հայ Գրականութեան լաւագոյն գործերը, այլ եւ օտար արտադրութիւններ. ո՛չ միայն գրական այս կամ այն սեռը, այլէ, հնարաւորութեան սահմանին մէջ, բոլոր սեռերը (վեպ, բանաստեղծութիւն, քաւերական կտորներ, պատկերներ, պատմութիւններ, եւն.):

Մինչեւ այսօր հրատարակուած են.—

1. ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ ԲԱՐԵԿԱՄԷՍ. — Սիւմաքոսի (Սում Եարնանեան), 1909ի կիլիկեան Ջարդէն: **Բովանդակութիւն՝** Սուգ, Պարբ, Լոգանքը, Զառակը, Դաշոյնը, Կոյրը, Խեղդամահը, Խաչը, Իրենց երգը, Քառուծիւն, ԹՅԵՆԻՆ, Յաղթանակ մը: **Ցապանագիր՝** է. Ակնունիէ: Ընտիր տպագրութեամբ, 1909. էջ 54. գին 3.50.
2. ՀԱԶԻ ԲԷԳ (ԳՆԼՈՒՍ ԱՐԽԱՆԵԱՆ). — Վէպ Հայ Յեղափոխական կեանքէ: Վրթակէս Փափագեանի, 1909. էջ 132, գին 6:
3. ՅԵՂԻՆ ՍԻՐՏԸ. — Քերթուածներ. Գ. Վարուժանի. բաժնուած է երեք մասերու, Բագինին վրայ, Կրկեսին մէջ, Դիւցազնապէսներ (1906—1909): Հատորին կցուած է նաեւ **Ջարդը՝** տպուած առանձին եւ սպառած: 1910, էջ 249, գին 9:
4. ՅԱՅԳԱԼՈՅՍ, Ռուբէն Զարդաբեանի, — Կը բովանդակէ **Իէֆեարներ, պատկերներ, արձակ ֆերուածներ** ելն. 1910, գին 7 50:
5. ԹԱՅԻՍ. — Վէպ Անաթօլ Յրանսի. Յարգմ. Շ. Մ.: Այս վէպը՝ ամենէն Թանկագին քարերէն մէկն է այն հոյակապ ժայռին, որ կը կազմէ Անաթօլ Յրանսի գործը: 1910. էջ 224, գին 7 զրշ:
6. ՍԱՆԹՕ. — Պատմութիւններ հայ բոշաներու կեանքէն. (Սանթօ, Մի Պատկեր, Խաչ Սարա): 1910, էջ 110, գին 5:
7. ԱՐՈՒ ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ. — (Սրարական Տաղերգութիւն). Աւետիք Խառակեանի. 1911. էջ 27. (մեծադիր) սպառած:

- 8. ՄԱՅՐԸ.— (Նոր Վէպ) Ղեւոնդ Մելոյեանի. հոգեբանական ուրուագիծ մը՝ վանական կեանքի նկարներով: Էջ 96, գին 4 ղրշ.:
- 9. ՎԵՐԺԻՆ.— Վէպ Լեւոն Շանթի. Բ. սպագրոութիւն: 1911, էջ 172, գին 6:
- 10. ՊԱՐՏԻԱԾՆԵՐ.— Աւետիս Ահարոնեանի. նուիրուած՝ «Սյարայ ըրըր պարուածներին՝ որոնք վաղուայ յաղթողներն են»: **Բովանդակութիւն**՝ Մահւան ճանկերում, Հայրը, Շղթաներ, Հսկումի գիշերները, եւ դրսում ուշուհն էր լալիս... Համրը, Ծովը անքում էր, Յոգնութիւն: 1912, էջ 95, գին 5 ղրշ.:

**2. — Զ Ա Ն Ա Զ Ա Ն**

- 11. ԱՂԱ ՆԱԶԱՐ (ԵՆՔԵԱԹ), Աւետիս Իսահակեանի. 1912, էջ 22, գին 60 փարա:
- 12. ՄԵՐ ՀԱՌԱՍԱՄՔԸ, Ասոմի (Յ. Շահրիկեան): 1910, էջ 52, գին 4:
- 13. ԴՐՈՒՍՎՆԵՐ ՍԱՍՈՒՆԻ ԿՈՒԻՆԵՐԷՆ, գրեց՝ Սեպուհ: 1910, էջ 52, գին 2:
- 14. ՆՈՐ ԿՇԻՈՒ, ՆՈՐ ԱՐԺԷՔ, Գեղամ վարդապետի: Հոգեւորական մըն է որ գիտութեան դատը կը պաշտպանէ: 1911, էջ 110, գին 3.50:
- 15. ԻՆՉ Է ԱԶԴՈՒԹԻԻՆԸ, Գ. Խաժակի (Ազգային գաղափարի նորագոյն վերլուծումը): 1912, էջ 160 (մեծադիր), գին 6:
- 16. ՍԳՍՊՍԿ ՓԻԷՒ ՔԻՅԱՌԻ ՅԵՇԱՍԿԻՆ. աշխատակցութեամբ քսան գրագէտներու եւ համակիրներու: Քիչեառի վերջին նկարով: էջ 88, գին 2.50:
- 17. ՄԵՆ ԻԳԷԱԼԻՍԸ, Ֆ. Փրէսանէի նկարով: Ակնունքի. գին 40 փարա:
- 18. ՄՏԵՐԻՄ ԶՐՈՅՆԵՐ, Փղշտացի. գին 12.50 ղշ.:

**3.**

**ԴԱՍԸՆԹԱՑՔ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ**

- 1. **ԼՈՒՍԱՔԵՐ ԱՅՔԲԵՆՍԱՐԱՆ.** պատրաստուած՝ Աս. Լիսիգեանի, Յովհ. Թումանեանի եւ Լեւոն Սեղբոսեանի կողմէ: **ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ,** 64 էջ, 90 պատկեր, ընթերցանութեան եւ գեղազրութեան վարժութիւններով: Գին 100 փարա:
- 2. **ԼՈՒՍԱՔԵՐ Ա. ՏԱՐԻ,** ընթերցարան մայրենի լեզուի Նոյն հեղինակներէն: **ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ,** 80 էջ, 100 պատկեր: Գին 4 ղրուշ.:
- 3. **ԼՈՒՍԱՔԵՐ Բ. ՏԱՐԻ,** ընթերցարան մայրենի լեզուի Նոյն հեղինակներէն, Բ. սպ. էջ 112, պատկեր 61: Գին 5 ղրշ.:

- 4. **ԼՈՒՍԱՔԵՐ Գ. ՏԱՐԻ,** էջ 144, գին 6 ղրշ.:
- 5. **ԼՈՒՍԱՔԵՐ Դ. ՏԱՐԻ.** էջ 176, գին 7 ղրշ.:
- 6. **ԼՈՒՍԱՔԵՐ ԳՐԱԻՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ, Ա. Տարի:** Դասեղու եւ շարարեղու, շեզուական ձևերու եւ ստորյներու, քառագիտութեան եւ ուղղագրութեան գրաւոր կենդանի վարժութիւններ: էջ 48, պատկեր 75: Գին 2 ղշ.:
- 7. **ԼՈՒՍԱՔԵՐ ԳՐԱԻՈՐ, Բ. Տարի:** էջ 48, պատկեր: Գին 2 ղրշ.:

Ուսուցիչներու համար անհրաժեշտ՝ **ԼՈՒՍԱՔԵՐԻ ՈՒՂԵՑՈՅԸ,** որ կը պարզէ ո՛չ միայն ընթերցարաններու այս շարքին մէքոսը, այլ՝ առհասարակ կարգով-գրել սորվեցնելու նոր արուեստը: Գին 10 ղրու:

- 8. **ՄԵՂՐԱԳԵՏ, ԺՈՂՈՎԱԾՈՒ ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ,** Ռուբէն Զարդարեանի: էջ 502, Գին 12.50:
- 9. **ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ, Մարգարէի:** Հեֆեաթներ 6-7 տարեկան երեխաներու համար: Պատկերազարդեց՝ Տիգրան Եսայեան: էջ 76, Պատկեր 12, Գին 3.50:
- 10. **ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ,** Վրբանէս Փափագեանի: Ա. հատոր՝ **ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ Եւ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ,** Բ. հատոր՝ **ԹՐՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.** (8 ղշ.): Գ. հատոր՝ **ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ,** (Թրքահայերէն)

**Բ. — ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ**

- 1. **ՀԱՅԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ,** Գ. Խաժակի Ա. Գիւրք. Բազմաթիւ պատկերներով: Գին 5 ղրշ.:
- 2. **ԱԶԳԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ,** Ա. Հատոր **ՀԻՆ ԱՐԵՒԵԼՔ,** Գ. Խաժակի: Բազմաթիւ պատկերներով: Գին 10 ղրշ.:
- 3. **ԱԶԳԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ,** Բ. հատոր. **ՅՈՒՆԱՍՏԱՆ Եւ ՀՌՈՄ.** Գ. Խաժակի:

**Գ. — ԱՄԲՈՂՉԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ ԳԻՏՈՒԹԵԱՆ**

- Մ. Նալբանդեանի, (Ժընեւի համալսարանէն) Ա. Բ. եւ Գ. գիրքեր:
- Գ. — **ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ ԱՏԿԱՍ** (աւելի քան ութ հարիւր նկարներով, յատկապէս Եւրոպայէն ապսպրուած): (Մամուլի քակ եւ ուրիշ նորութիւններ)

“ՄԱՏԵՆԱԸԱՐ ԱՐԱՊՈՒՆԻ”

Հաստատելով «Մատենաշար Արամակի»-ն, մենք առաջադրած ենք, մեր համեստ սահմանին մէջ, օգնել կարեւոր պահանջի մը լրացման: Այս պարբերակէն հրատարակութիւնները, որոնց իւրաքանչիւր թիւը կը կազմէ ամբողջական գործ մը, պիտի բովանդակեն ո՛չ միայն հայրենի եւ համաշխարհային նեփեսներ, վեպիկներ, առանդոթիւններ, այլ եւ գիտական գրոյցներ, մանկական քաւերախաղեր եւ նման տրտաղբութիւններ, թէ՛ թարգմանական եւ թէ՛ ինքնուրոյն, բոլորն ալ պատրաստուած յատուկ խնամքով եւ ճաշակով: Մանաւանդ հոգ պիտի տարուի շեղուական ներդաշնակութեան, ոճի գրաւորութեան, եւ պակերներու, որոնք տարրական պայմաններ են:

Իւրաքանչիւր հատոր ունի առանձին պատկերազարդ կողք:

Արդէն իսկ հրատարակուած են.—

- |    |                                   |          |
|----|-----------------------------------|----------|
| 1. | ԾՈՎԻՆ ԱՂՋԻԿԸ, Անեքրոբի, 22 նկարով | 100 փարս |
| 2. | ՈՒԹԸ ՀԷՔԵԱԹՆԵՐ, 28 նկարով         | 100 փարս |
| 3. | ԹԱՂԻՍՄԱՆ, Ուլ. ԱԿՈԹԻ, 26 նկարով   | 100 փարս |

ԱՌԱՋԻՆ ԳԻՌԲԸ ԻՐ ՏԵՍԱԿԻՆ ՄԷՋ

## ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ԳԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԸԴԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳԻԾԵՐ ՄԵՐ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Գրեց՝ Ա Տ Ո Մ

ԳԻՆ 4.50 ՂՐԾ.

Պարզ ակնարկ մը միայն — կը բաւէ Հաստատելու իրական արժէքը այս հրատարակութեան, որ աննախընթաց է ոչ միայն իր բովանդակութեանը, անխիղ հիւսիսով ու յայտնութիւններով, այլ եւ ձգտումով:

« Ազգային գրադարան



NL0218013

## Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

## ԱՐԾԻՔ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻ

(Առանց հառուկու դպրոցական շարքը)

- |  |      |
|--|------|
| 1. ԼԱՐՄԻՐ ԼՈՒՐՈՐ ԲԱՐՆԿԱՄԷՍ. — Սիամանթօի.   | 3.5  |
| 2. ՀՍ.ԶԻ ԲԷԿ. Վ. Բրանկա Փափագեանի.   | 6.-  |
| 3. ՅԵՂԻՆ ՍԻՐՏԸ. — Քերթուածներ. Գ. Վարուժանի.   | 9.-  |
| 4. ՅԱՅԳԱԼՈՅՍ, Ռուբէն Զարդարեանի:   | 7.5  |
| 5. ԹԱՅԻՍ. — Վէպ Անաթօլ Ֆրանսի. Թարգմ. Շ. Մ..   | 7.-  |
| 6. ՍԱՆԹՕ. — Վ. Բրանկա Փափագեանի.   | 5.-  |
| 7. ԱՐՈՒ ԼԱԼՍ. ՄԱՀԱՐԻ. — Աւետիք Բաճակեանի. (սպառա)  |      |
| 8. ՄԱՅՐԸ. — (Նոր վէպ). Ղեւոնդ Մելոյեանի.   | 4.-  |
| 9. ՎԵՐԺԻՆ. — Վէպ Լեւոն Շանքի. Բ. տպ.   | 6.-  |
| 10. ՊԱՐՏԻԱԾՆԵՐ. — Աւետիս Ահարոնեանի:   | 5.-  |
| 11. ՍՂՕ ՆՍԶՍՐ (Յէրեան), Աւետիք Բաճակեանի.  | 1.5  |
| 12. ՄԵՐ ՀՍԻԱՏԱՄԻՐԸ. Ատոմի (Յ. Շահրիկեան).  | 4.-  |
| 13. ԳՐՈՒՍԳՆԵՐ ՍԱՍՈՒՆԻ ԿՈՒՒՆԵՐԻՆ, Սեպուհ:   | 2.-  |
| 14. ՆՈՐ ԿՇԻՌ, ՆՈՐ ԱՐԺԷՔ, Գեղամ վարդապետի:  | 3,5  |
| 15. ԻՆՉ Է ՕՂԳՈՒԹԻԻՆԸ, Գ. Խաճակի:   | 6.-  |
| 16. ՀԻՆ ԱՐՅԻՅԼԷ, Գ. Խաճակի.  | 10.  |
| 17. ՍԳԱՊՍԱԿ ՓԻԷՌ ԳԻՅԵՍՏՈՒ ՅԵՇԱՏԱԿԻՆ.   | 2.5  |
| 18. ՊԱՏՄ. ԹՐԲՈՀԱՅ ԳՐԱԿ. Վ. Փափագեանի.  | 8.-  |
| 19. ՄՏԵՐԻՄ ԶՐՈՅՆԵՐ, Փղոսացի  | 12.5 |
| 20. ՄԵՆ ԻԳԷՍԼԻՍՏԸ, (Փրէսանտէի նկարով) Է. Ակնունի   | 1.-  |
| 21, 22, 23 ՄԱՏԵՆՆԵՇԱՐ ԱՐԱՅՄԱՆԻ (1. Ծովից աղջիկ<br>2. Ուր Հէֆաթներ 3. Թափաման): Հատը 2.50 դրոշ. |      |

